1852
h-56

4997-5005

28
र-56

2010

Ш.1996

84

1

№ 2001

281
Ն-78

ՆԿԱՐԱԳԻՐ

ԸՌԸՓԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԻՏԱԼԵՐԵՆԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

"Ո՞ Երկրէ վրայ մեկը յեղէ հայր մի՛ կոչէք. զնոսա որ յեր հայրը մեկ մըն է, որ երկնքին է":
(Մատթ. իգ. 9:)

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Գ. ՀԱՐԻՀԱՆԻ

1854

78131-U.Z'

1213-87

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

Մոլորութիւններով լեցուն եղած աշխարհի մը մէջ՝ ճշմարտութիւնը ո՞ւր կրնայ գըտնուիլ։

Աշխարհիս պատմութենէն և մեր դիտողութիւններէն կը տեսնենք՝ որ մարդոց մեծագոյն մասը, խաւարը լոյսէն աւելի կը սիրեն. նաև անոնցմէ կը սորվինք ալ, թէ կրօնական ճշմարտութիւնը մարդոց համար շատ հրապուրիչ զօրութիւն չունի. թէ շատերը անոր տեղը մոլորութիւնները կը փոխանակեն, և թէ "ինքզինքին իմաստունի տեղ դնելով՝ յիմարած են"։

Կրօնական նիւթոց մէջ՝ միշտ կարծեաց տարբերութիւն մը կայ մարդոց մէջը։ Դրեթէ ամէն ազգ հաւատոյ մասնաւոր դաւանութիւն, մասնաւոր վարդապետութիւններ, մասնաւոր արարողութիւններ ունի. և ուր որ ազատութիւնը կը տիրէ, ազգերը շատ անգամ զանա-

զան բաժանմունք կ'ունենան : Ան տեղերը՝ ցեղ մը մէկ ուրիշ ցեղէն , ընտանիք մը ուրիշ ընտանիքէն , և մասնաւոր անձ մը ուրիշ անհատէ մը կը տարբերին • և քանի քանի անգամ որ Թուրը՝ միութիւնը ամբողջ պահելու համար գործածուած է , միշտ դրսուանց աս բանը եղած է և ներսէն կը տիրէ անմիաբանութիւնը : Ո՛չ Կայսերաց իշխանութիւնը , և ո՛չ ալ պապական եկեղեցւոյ ամենասոսկալի սրբաքննութիւնը կարող եղան բնաւ երբէք կրօնական միութիւն մը հաստատելու : Նոյնպէս՝ բան մը չկրցան ընել ընդհանրական Սուրբ Յողովքներ ըսուածներուն բոլոր ջանքերը : Որչափ որ Յողովքներն ու անոնց Կանոնները շատցան , այնքան ալ եկեղեցիներուն մէջ բաժանմունքը և դէշութիւնները կ'աճէր , և անոնց ամէն մէկը իր վրան կ'առնէր ՈՒՂՂԱՓԱՌ կամ (օրթոտոքս) անունը՝ նոյն ատենը որ միւսները կը բանադրէին իբրև մոլորեալ , անհաւատ և հերետիկոս :

Ուստի ո՞ւր կրնայ դտնուիլ ճշմարտութիւնը: Կրօնական զդացումները մարդկային հոդւոյն մէջ ընդարձոյս են : Բնաւին մէկ կրօնք մը չունենալուն տեղը՝ մարդը կ'ընդունի խիստ արտառոց ծիծաղական և ամօթալի կրօնք մը : Բնաւ մէկ պաշտելու առարկայ մը չունենալուն տեղը՝ մարդը կորկորդիլոսները , եզները , կատուները , սոխը ու անանկ ուրիշ բաներ կը պաշտէ՝ որոնց վրայ «խօսիլն անգամ ամօթ է» : Եւ աստիկայ դիտելու արժան բան մըն է որ՝ մէկ կը-

բօնքի մը մէջ որչափ շատ որ ըլլայ սքանչելի ու առասպելական բաներ, այնքան ալ անոր յարող մարդիկ շատ կ՚ըլլան. և ալ աւելի շատ, երբոր ան առասպելները՝ որոնց վրայ որ հիմնուած են անոնց կրօնքը, իրենց նախնեացը պատմութեանը հետ կապակցութիւն ունենայ, և անոնք դիւցազանց կարգը անցընէ, և շատ հեղ ալ մինչև անգամ աստուածացընէ։

Այս ստոյգ է որ՝ մարդիկ ընդհանրապէս մասնաւոր յարգ մը կու տան հին բաներուն. և անանկ կը սեպեն թէ՝ հիները ամէն դիտութեան գանձարան են։ Ինչ որ իրենք ճնութեան նսեմ ամպին մէջ կը տեսնեն, սքանչելի կերպով իրենց աչքին մեծ կ՚երևայ. անանկ որ՝ հազար տարուան դաճաճը, իրենց հսկայի մը պէս կու գայ. ու ժամանակաւ ընդունուած ստութիւն մը, ուղղափառութեան անհերքելի նիւթ մը կ՚ըլլայ։ Զաւկրները բնականապէս կը համարին թէ իրենց ծնողքը՝ թէ այս կեանքիս և թէ հանդերձեալ կենաց վերաբերեալ բոլոր բաներուն մէջ իրենց օրինակն են. և անարատ կերպով՝ անցրելի ճշմարտութեան պէս կը բռնեն բոլոր իրենց տղայութեան ատենէն 'ի վեր անոնցմէ սորված-ներնին։

Ուստի այնչափ սխալմունքներուն մէջը և բնականապէս չարին հակամիտեալ սրտով մը, ճշմարտութիւնը ի՞նչպէս կրնայ գտնուիլ։

Ոմանք ինքնիրենին խորհել սորվելով և իրենց առջև տարիքներնուն մէջ ունեցած բոլոր

նախապաշարմունքները ձգած ըլլալով, տա-
կաւին ԵՌԵՐԵԼԵՑԻՆ ՅԵՂՈՐԴՈՒԹԻՒՆ
ըսուած արտառոց գաղափարը վրանին կը կրեն։
Թէ և Քրիստոսի առաքեալները՝ իբրև առա-
քեալ, իրօք չէին կրնար յաջորդ մը ունենալ։

Ամենք ալ կ'երևակայեն թէ՝ կրօնական դը-
րութիւնը՝ քաղաքական կառավարութեան
կերպին հետ համաձայն ըլլալու է։ և անոնք որ
կը կառավարուին Կայսրներէ, Ինքնիշխան տի-
բապետներէ կամ Նախարարներէ, կը խորհին
որ Քրիստոսի եկեղեցին անոնց համաձայն ըս-
կրզբունքներու վրայ շինուելու են։ քանի որ
բուն ինքը Քրիստոս՝ ասոր հակառակը կը
սորվեցընէ։

Ուրիշներ ալ կան՝ որ բոլոր կրօնքները մէկ
կը սեպեն։ և միայն ռամիկին համար հարկաւոր։

"Ի՞նչ է ճշմարտութիւնը" հարցուց Պիղա-
տոս՝ բուն իսկ անիկա սորվեցընողին։ բայց
առանց պատասխանը առնել սպասելու, դուրս
ելաւ ան մարդոցը հետ խօսակցելու՝ որոնք որ
ճշմարտութիւնը կ'ատէին, և որոնց բարեկա-
մութիւնը նախապատիւ կը համարէր՝ նոյն իսկ
ճշմարտութենէն։

Ուրեմն ո՞ւր կրնայ գտնուիլ ճշմարտութիւ-
նը։ և թէ որ գտնուելու ալ ըլլայ, ո՞վ կրնայ
պիտի աս աշխարհիս մէջ զանիկայ քարոզելու՝
ուր որ սուտ մարդարէներ և սուտ ուսուցիչ-
ներ ճշմարտութիւնը սորվեցընողներէն խիստ
աւելի շատցած են։ և ուր որ ասոնք նախատ-

ուած և հալածուած են, քանի որ միւսները փառաւորուած են։

Իմ գաղափարիս նայելով՝ բոլոր մարդկային վարդապետութիւններէն ինքզինքս հեռացընելով, Սուրբ Գրոց կ'ապաւինիմ՝ որուն ԵՍՏՈՒԾՈՅԸ, ՈՒՆԱՁ ալ կ'ըսուի ընդհանրապէս. կատարեալ համոզմամբ, որ ասիկա է մի միայն և ճշմարիտ աղբիւր կրօնական ճշմարտութեան. և մի միայն վարդապետութիւն՝ որուն կրնանք անսխալապէս հաւատալ և ընդունիլ առանց երկիւղի կամ երկբայութեան. կենաց ջրոյն աղբիւրը՝ որ շատերը թողուցին "ծակած ջրհորէն ջուր հանելու համար". մի միայն կրօնական դրութիւն՝ որ առանց ամենափոքր բան մը աւելցընելու կամ փոխելու, զինքը անկեղծութեամբ ընդունողները և բոլոր սրտով զինքը սիրողները երջանիկ կ'ընէ։

Աս ՆԿԱՐԱԳԻՐԻՆ ՄԷՋ դիտմամբ զանց ըրի բոլոր դժուարիմաց զրուցուածքներն ու ոճերը, և "մի միայն իմաստուն Աստուծոյն" պարզ սորվեցուցածին և լեզուին մէջ ամփոփեր եմ զրուցելիքներս. ան Աստուծոյն՝ որ Սուրբ Գրեանքը ամէն կարգի մարդոց համար տուաւ, որ անկէ սորվին թէ մեծը և թէ փոքրը. հարուստն ու աղքատը. գիտունն ու տգէտը, երիտասարդն ու աղջիկը. ծերն ու տղան։

Թէ որ դիպուածով մը որ և իցէ եկեղեցւոյ

Առաջնորդներէն մէկուն ձեռքն անցնելով, և կարդալով չհաճի աս տետրակին մէջի բացատրութեանը, կ՚աղաչենք որ ասոր դէմ իրենց հասարակ զէնքը չգործածեն. ինչպէս են՝ նախատինք, անաթեմներ և բանադրանք, այլ ասոնց տեղը՝ առանց նախապաշարման և կողմնասիրութեան Սուրբ Գիրքերը թող քննեն՝ որ տեսնեն թէ ըսածներս Աստուծոյ Խօսքին համաձայն են թէ ոչ. և թէ որ համաձայն չեն՝ կ՚աղաչենք որ աս տետրակին Հերքումը նոյն իսկ Աստուծոյ Խօսքովը գրեն։ Նոյն ատենը կ՚աղաչենք որ չմոռնան ալ թէ՝ Քրիստոնեայ անուամբ կոչուած բոլոր եկեղեցիները, ինչ որ ալ ըլլայ մէկ կողմանէ իրենց կարծիքը՝ Յողովքներուն և Հայրերուն աստուածային ներշնչութիւն ունենալուն, և անոնց Կանոններուն հեղինակութիւն ունենալուն վրայով, միւս կողմանէ ալ կը խոստովանին միաբան կերպով՝ Աստուծոյ Խօսքին աստուածային ներշնչութիւնը, և անոր հեղինակութիւնը։

Բոլոր աս տետրակը ընթերցողներուն կ՚աղաչենք որ այս նիւթը նոյն Աստուածային Խօսքին լոյսովը քննեն, առանց ուշադրութիւն ընելու մարդկային աւանդութեանց և անոնց պատուիրանքներուն՝ որոնք գոնէ երկրայելի են, շատ անգամ ալ մոլորական. և հետևաբար անարժան հաւատք ընծայելու այնպիսի խոհեմ և խղճմտանքի տէր մարդոցը՝ որոնք ճշմարտութիւնը կը փնտռեն։

ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

---

1 • ՅԻՍՈՒՍ Քրիստոսի մարմնոյն անդամները (1) և իրեն ճշմարիտ աշակերտները անոնք կը համարուին, որ Քրիստոսի վրայ իրենց ունեցած հաւատքնուն դաւանութիւնովը (2) և իրենց բարի վարքովն ու գործքերովը Աստուծմէ ծնած ըլլալնին կը ցուցընեն (3)։

---

(1) Ըստ՝ դուք Քրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս անոր անդամները։ ա Կորնթ. ժբ. 27։

Վասն զի մենք անոր մարմինին անդամներն ենք՝ անոր մարմինէն ու անոր ոսկորներէն։ Եփես. ե. 30։

(2) Եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս, ու քու սրտիդ մէջը հաւատաս թէ Աստուած անիկայ մեռելներէն յարուց, պիտի փրկուիս։ Հռովմ. ժ. 9։

Ան որ հաւատայ՝ ու մկրտուի, պիտի փրկուի։ Մարկ. ժզ. 16։

(3) Եթէ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք։ Հովհ. ը. 31։

Ա՛իմանաք թէ՝ ամէն ո՛վ որ արդարութիւն կը գործէ, անկէ ծնած է։ ա Հովհ. բ. 29։

Ներքին ծնած ըլլալով՝ չէ՛ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն Աստուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը։ ա Պետ. ա. 23։

Դուն քու հաւատքդ ցուցո՛ւր ինծի առանց գործքերու, ու ես քեզի ցուցընեմ իմ հաւատքս իմ գործքերէս։ Յակ. բ. 18։

Վասն զի ամէն ծառ իր պտուղէն կը ճանչցուի։ Լուկ. զ. 44։

2 • Ուստի՝ մի միայն կանոն հաւատոյ և իբրեւ գործոցը, կ'ընդունին Աստուծոյ խօսքը • որք են Հին և Նոր Կտակարանին կանոնական գրեանքը • և ասանկով կ'ըլլան Առաքեալներուն ու մարգարէներուն հիմին վրայ շինուած՝ որ անոր անկիւնին գլուխը Յիսուս Քրիստոսն է • (Եփես • բ • 20 •) և հետևապէս մարդոց յօրինած թէ կրօնական և թէ բարոյական բոլոր գրուածքները, և ժողովքներուն բոլոր գործքերը կը քննեն ու կը կշռեն Աստուծոյ խօսքին ան մի միայն անսխալելի կշռաքովը (4):

---

(4) Պարապ տեղը զէս կը պաշտեն, մարդոց պատուիրած բաները իբրև վարդապետութիւն սորվեցընելով: Մատ. Է. 7: Նոյ. իԹ. 13:

Ինչու համար աշխարհիս մէջը կենդանի եղողներու պէս ասանկ կանոններու կը հնազանդիք, ըսելով. Մի՛ մօտենար, համբ մի՛ առներ, մի դպչիր • • • մարդոց պատուիրանքներուն ու սորվեցուցածներուն համեմատ: Կող. բ. 20—22:

Սակայն դուն հաստատո՛ւն կեցիր ան բաներուն մէջը՝ որ սորվեցար ու հաւատացիր, ինչու որ գիտես թէ որմէ սորված ես • նաև քու մանկութենէդ՝ ի վեր Սուրբ Գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկութեան՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը: Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցընելու, յանդիմանելու, շտկելու, ու արդարութեան խրատելու համար • որ Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու պատրաստուած: բ Տիմ. Գ. 14—17:

Բանը Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին, որ Աստուծոյ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդունեցին, և ամէն օր Գիրքերը կը քննէին՝ թէ աս բաները ասա՞նկ է: Գործ. ԺԷ. 11:

Ես քեզի ի՞նչ որ կը պատուիրեմ, զգուշացի՛ր ան ընելու •

3 • Ես տեսակ մարդոց երկուքին կամ երեքին , և կամ աւելի շատին , Յիսուս Քրիստոսի անունովը ժողովուիլը եկեղեցի մը կը կազմէ (5) , որուն մի միայն գլուխը և մի միայն Տէրը Քրիստոսն է (6) ։

4 • Ես եկեղեցին ինքիրմով կը կառավարուի (7) , մեծագոյն մասին հաւանութիւնովը նոր

անոր վրայ բան մը չաւելցընե՛ս , ու անկէ բան մը չպակսեցընե՛ս ։ ℟ Օրէն • ԺԲ • 32 ։

Ձեզի պատուիրած խօսքիս վրայ բան մը չաւելցընե՛ք , ու անկէ բան մը չպակսեցընե՛ք , այլ ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքները պահէք , որոնք ես ձեզի կը պատուիրեմ ։ ℟ Օրէն • Դ • 2 ։

Թէ որ մէկը ասոնց վրայ բան մը աւելցընէ , Աստուած ալ անոր վրայ պիտի աւելցընէ ան հարուածները՝ որ աս գրքիս մէջը գրուած են ։ Եւ թէ որ մէկը աս մարգարէութեանս գրքին խօսքերէն բան մը պակսեցընէ , Աստուած ալ անոր բաժինը պիտի պակսեցընէ կենաց ծառէն և սուրբ քաղաքէն՝ որ աս գրքիս մէջը գրուած են ։ Հայտ • ԻԲ • 18—19 ։

Երաշ ունեցող մարդարէն՝ թո՛ղ երաշ պատմէ , իսկ իմ խօսքս ունեցողը՝ ճշմարտութեամբ թո՛ղ իմ խօսքս խօսի • յարդը՝ ցորենին քովը ի՞նչ է՝ կ՚ըսէ Տէրը ։ Երէմ • ԻԳ • 28 ։

(5) Քանզի ո՛ւր որ երկու կամ իրեք հոգի ժողվուած ըլլան իմ անունովս , հոն եմ ես անոնց մէջը ։ Մատթ • Ժ • 20 ։

"Բարև ըրէ՛ք եղբայրներուն՝ որ Լաւոդիկեա են , և Նիմփասին , ու ԱՆՈՐ ՏԱՆԸ ՄԷՋԻ ԵԿԵՂԵՑԻՆ ։ Կողոս • Դ • 14 ։

Պօղոս՝ • • • Փիլիմոն մեր սիրելիին • • • ու քու տանդ մէջի եկեղեցիին ։ Փիլմ • 1—2 ։

(6) Եւ անիկայ է մարմնին՝ այսինքն եկեղեցիին գլուխը ։ Կողոս • Ա • 18 ։ և Եփես • Ա • 22—23 ։ և Դ • 15—16 ։

(7) Եւ շատ վիճաբանութիւն ըլլալէն ետև՝ Պետրոս ոտքի վրայ ելաւ , ու ըսաւ անոնց • Մարդի՛կ եղբայրներ՝ դուք գի-

անդամները կ'ընդունի 'ի ծոց եկեղեցւոյ , և դուրս կը հանէ անառակութեամբ վարուողները (8) , Հովիւներ (9) , և սարկաւագներ կ'ընտ-

---

տէք . . . Նոր բոլոր ժողովուրդը լուռ կեցաւ , ու մտիկ կ'ընէր Յառնաբասին ու Պօղոսին , որոնք կը պատմէին թէ Աստուած ո՞րչափ նշաններ ու հրաշքներ ըրեր էր . . . Նոր անոնք խօսքերնին կտրելէն ետև՝ Յակոբոս պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Մարդի՛կ եղբայրներ՝ լսեցէ՛ մտիկ ըրէք . . . Ան ատենը առաքեալներուն ու երէցներուն՝ բոլոր եկեղեցիին հետ մէկտեղ աղէկ երևցաւ՝ որ իրենցմէ մարդիկ ընտրելով Անտիոք խրկեն Պօղոսին ու Յառնաբասին հետ . . . Ու անոնց ձեռքովը թուղթ մը խրկեցին այսպէս գրուած : Առաքեալներ ու երէցներ և եղբայրներ՝ Անտիոքի ու Սիւրիայի և Կիլիկիայի մէջ . . . Ո՛ղջ եղէք : Գործ . ԺԵ . 7—31 :

(8) Նոր թէ որ անոնց ալ մտիկ չընէ , եկեղեցիին ըսէ՝ . իսկ թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի : Մատթ . ԺԸ . 17 :

Նրբոր մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը մէկտեղ ժողովուիք դուք՝ ու իմ հոգիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնովը , անանկը Սատանային մատնեք՝ մարմինը կորսուելու համար , որ հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը :

Եթէ որ դուք ներսինները կը դատէք . . . Ուստի չարը ձեր մէջէն վերցուցէ՛ք : ա Կորնթ . Ե . 4—5 : և 12—13 :

Հերիք է անանկ մարդուն ան պատիժը , որ շատերէն եղաւ : Ուստի ընդհակառակն պէտք է աւելի ներել , ու մխիթարել , որ չըլլայ թէ անանկը աւելի տրտմութենէն ընկղմի : Ուստի կ'աղաչեմ ձեզ , որ անոր վրայ ձեր սէրը հաստատէք : բ Կորնթ . Բ . 6—8 :

(9) Նոր անոնց համար վիճակ ձգեցին , ու վիճակը Մատաթիայի ելաւ . և անիկայ տասնումէկ առաքելոց հետ սեպուեցաւ : Գործ . Ա . 26 :

Եկեղեցիներէն ընտրուեցաւ մեզի ճամբորդութեան ընկերը բլլալու աս տուրքերուն մէջ , որ մենք կը ծառայենք , և այլն : բ Կորնթ . Ը . 19 :

րէ (10)։ բարեկամական կապակցութիւնները կը պահէ ուրիշ եկեղեցիներու հետ։ եղբայրական խորհուրդներ կու տայ և կ'ընդունի, բայց չեղներ ուրիշ եկեղեցիներու վրայ՝ ոչ ալ ուրիշներէն կ'իշխուի (11)։ Ասոնց մի միայն կապը Քրիստոսի մէջ եղած սէրն է (12)։ Բոլոր առաքելական եկեղեցիներուն մայրը վերին Երուսաղէմն է (13)։ Ա՛ս ալ կայ որ՝ եկեղեցւոյ կառավարութեանը մէջ կնիկ մարդիկ չեն մտներ (14)։

---

(10) Նու տասուներկուքը կանչեցին աշակերտներուն բազմութիւնը՝ ու ըսին։ Մեզի չվայլեր Աստուծոյ խօսքը ձգել, ու սեղաններու ծառայութիւն ընել։ Ուստի ե՛ղբայրներ՝ ձեզմէ եօթը հոգի ընտրեցէ՛ք՝ բարի վկայուած՝ Հոգւով Սրբով և իմաստութիւնով լեցուն, որ զանոնք ասա դործիս վրայ դնենք։ ։ ։ Նու ասա խօսքը բոլոր բազմութեան առջևը հաճոյ երևցաւ։ ու ընտրեցին Ստեփաննոսը՝ հաւատքով և Հոգւով Սրբով լեցուն մարդը, և այլն։ Գործ։ ղ։ 2—5։

(11) Ձէ՛ թէ վիճակներու վրայ տիրելով, հապա հօտին օրինակ ըլլալով։ ։ Պէտ։ է։ 3։

(12) Գանալով Հոգւոյն Սրբոյ միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել։ ։ ։ Հապա սիրով ճշմարտութեան հետեւելով՝ ամէն բան Ընով աճեցընենք՝ որ գլուխ է՝ այսինքն Քրիստոս։ որ անկէ բոլորը մարմինը մէկտեղ կազմուած՝ և ամէն յօդուածները իրարու հաղորդուելով կցուած՝ ամէն մէկ մասին չափով ներգործելով՝ մարմինին աճումը կու տայ՝ իրեն շինութեանը համար՝ սիրով։ Եփես։ դ։ 3։ և 15—16։

(13) Բայց վերի Երուսաղէմը աղատ է, որ մեր ամենուն մայրն է։ Գաղատ։ դ։ 26։

(14) Բայց կնիկ մարդու հրաման չեմ տար սորվեցընելու, ո՛չ ալ էրկի մարդուն իշխելու, հապա լուռ կենալու։ ։ Տիմ։ բ։ 12։

5 • Ամէն մէկ եկեղեցի իր Հովիւը կ'ընտրէ՝ Պօղոս առաքելոյն Տիմոթէոսին գրած առաջին թուղթին և Տիտոսին գրած թուղթին մէջ բո-վանդակեալ պատուէրներուն համաձայն (15) :

6 • Եկեղեցին ամէն մէկ անդամին կարողու-թեանը համեմատ, իր հովիւին ու անոր ընտան-

---

Ձեր կնիկները եկեղեցիներուն մէջ լռ'ւռ կենան • ինչուռ որ անոնց հրաման չկայ խօսելու, հապա հնազանդ ըլլալու, ինչպէս որ օրէնքն ալ կ'ըսէ : ա Կորնթ • ժդ • 34 :

(15) Ուստի պէտք է եպիսկոպոսին անարատ ըլլալ, մէկ կնոջ մը էրիկ, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրասէր, սորվեցընող • ո՛չ գինեմոլ, ո՛չ զարնող, հապա հանդարտ, ո՛չ կռռուող, ո՛չ արծաթասէր • որ իր տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլայ, իր զաւակները հնազանդութեան մէջ պահելով բոլոր ծանրաբարոյութեամբ • (հապա թէ որ մէկը իր տանը վերակացութիւն ընելը չգիտնայ, ի՞նչպէս Աստուծոյ եկեղեցիին հոգաբարձու պիտի ըլլայ •) ո՛չ ալ նորահաւատ ըլլայ • որ չըլլայ թէ հպարտանալով Սատանային դատապարտութեանը մէջ իյնայ : Հապա պէտք է անոր դուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունենալ, որ չըլլայ թէ նախատինքի մէջ ու Սատանային որոգայթին մէջը իյնայ : ա Տիմ • գ • 2—7 :

Այսոր համար ես քեզ Կրետէ թողուցի, որ ինչ պակաս բան որ կայ, շտկես, ու ամէն մէկ քաղաքի մէջ երէցներ կարգես, ինչպէս որ ես քեզի պատուիրեցի • թէ որ մէկը անմեղադրելի ըլլայ՝ մէկ կնկան մը էրիկ, հաւատացեալ զաւակներ ունենայ, որ անառակութեան համար ամբաստանուած՝ կամ անհնազանդ չըլլան : Ինչուռ որ եպիսկոպոսին պէտք է անմեղադրելի ըլլալ՝ Աստուծոյ տնտեսին պէս • ո՛չ յանդուգն, ո՛չ բարկացող, ո՛չ գինեմոլ, ո՛չ զարնող, ո՛չ անարդ շահախնդրութեան ետևէ եղող, հապա հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ • հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որ կարող ըլլայ ողջամիտ վարդապետութիւնով յորդորել և հակառակ կեցողները յանդիմանել : Տիտ • ա • 5—9 :

եացը ապրուստը կը ճարէ՝ որպէս զի կարող ըլլայ անիկա բոլորովին իր հոգևոր պարտաւորութիւններուն պարապելու (16)։ Բայց հրաման չկայ իրեն, որ և իցէ կրօնական պաշտօն մը կատարելու համար վարձք պահանջել։ Աստուծոյ բաները ոչ ստակով կը ծախուին և ոչ ալ ծախու կ՚առնուին (17)։

7. Հովուին առաջին պարտաւորութիւնն է Աստուծոյ խօսքը քարոզել (18), ժողովրդոց Աստուծոյ բաները սորվեցնել՝ թէ հրապարակաւ և թէ առանձին տան մէջ (19)։ Հի-

---

(16) Սանկ ալ Տէրը հրաման տուաւ, որ աւետարանը քարոզողները աւետարանէն ապրին։ ա Կորնթ. թ. 14։

(17) Բայց Պետրոս ըսաւ անոր. Քու արծաթդ քեզի հետ թող կորսուի. ինչու որ Աստուծոյ պարգևը կարծեցիր թէ ստակով կ՚առնուի։ Դուն ատ բանին մէջ մասն ու բաժին չունիս. ինչու որ քու սիրտդ Աստուծոյ առջևը շիտակ չէ։ Ուստի ատ քու չարութենէդ զեղջի՛ եկուր, ու Աստուծոյ աղաչէ՛. դուցէ ներուի քեզի քու սրտիդ չար խորհուրդը։ Ինչու որ ես քեզ մաղձի դառնութեան մէջ, եւ անիրաւութեան կապին մէջ կը տեսնեմ։ Գործք. ը. 20 — 23։

Դիտնալով որ դուք չէ՛ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր հայրերէն աւանդուած ունայն ճամբաներէն, հապա Քրիստոսի պատուական արիւնովը՝ որպէս թէ ամրիծ ու անարատ գառի մը։ ա Պետ. ա. 18 — 19։

(18) Խօսքը քարոզէ՛. մնադրութեամբ գործքիդ պարապէ՛ ատենին ու ատենէ դուրս, յանդիմանէ՛, սաստէ՛, յորդորէ՛ ամէն երկայնմտութիւնով ու վարդապետութիւնով։ բ Տիմ. դ. 2։

Լու մնք աղօթքի ու Աստուծոյ խօսքին պարապինք։ Գործք. զ. 4։

(19) Դուք գիտէք որ ան առջի օրէն հետէ որ ես Ասիա եկ-

ւանդներուն այցելութեան երթալ, նեղութեան մէջ եղողները մխիթարել, և խորհուրդ ու խրատ տալ ամենուն, հաղորդութիւն մատակարարել, մկրտել, պսակել, թաղել, ամենուն համար աղօթք ընել (20), և Յիսուս Քրիստոսի հօտին օրինակ ըլլալ ամէն կերպով՝ թէ խօսքով ու թէ գործքով (21)։ Ընտարբեր

կայ, ինտո՛ր ձեր հետը վարուեցայ, բոլոր ժամանակը. ամէն խոնարհութիւնով Տէրոջը ծառայելով, և շատ արցունքով ու փորձութիւններով, որ Հրէից նենգութիւններէն ինծի պատահեցան. ինտո՛ր վախնալով ետ չկեցայ օգտակար բաներուն բընաւ մէկը ձեզի զրուցելէն, ու ձեզի հրապարակաւ և տան մէջ սորվեցընելէն. վկայութիւն տալով Հրէից և Յունաց առջևը դէպ 'ի Աստուած ապաշխարութեան համար, ու մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայ եղած հաւատքին համար։ Գործ. ի. 18 — 21։

Նը կ'ուզեմ որ ասոնք հաստատես, որ Աստուծոյ հաւատացողները հոգ տանին բարի գործքեր ընելու վրայ ըլլալ. և այլն։ Տիտ. գ. 8։

(20) Որդ՝ կ'աղաչեմ՝ ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն՝ ամէն մարդոց համար, և այլն։ ա Տիմ. բ. 1։

(21) Ամէն կողմէ քու անձդ բարի գործքերու օրինակ ցուցընելով, վարդապետութեան մէջ անեղծութիւն, պարկեշտութիւն, ողջամիտ ու անմեղադրելի խօսք. որ հակառակ կեցողը ամչնայ, ու մեր վրայով դէշ բան մը չունենայ ըսելու։ Տիտ. բ. 7 — 8։

Հապա դուն օրինա՛կ եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարմունքով, սիրով, հաւատքով և մաքրութեամբ։ Մինչև որ ես գամ՝ մի՛տք դիր կարդալու, յորդորելու, սորվեցընելու... Ինտո՛նց վրայ խորհէ՝ ու ատոնց մէջը պարապէ, որ քու յառաջադիմութիւնդ ամենուն յայտնի ըլլայ։ Զգու-

կերպով աս անուններըը կը տրուին. երէց, առաջնորդ, քարոզիչ, հովիւ, եպիսկոպոս, խօսքին պաշտօնեայ, կամ Քրիստոսի ծառայ (22): Բայց փառաւոր տիտղոսները կամ անունները՝ որոնք միայն Քրիստոսի կը վերաբերին, չընդունիր (23): Ուղածին պէս և կամ երկրին սովորութեանը համեմատ հագուստ կ'ունենայ. բայց վայելուչ

շացի՛ր քու անձիդ ու վարդապետութեանը՝ ու միշտ ատոնց մէջը կեցի՛ր. քանզի այդպէս ընելով, քեզ ալ պիտի ապրեցնես, ու անոնք ալ՝ որ քեզի մոտիկ կ'ընեն: ա Տիմ. դ. 12—16:

(22) Պօղոս և Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառաները, Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն՝ որ Փիլիպպեցւոց կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւագներով. շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիստոսէն, ամէն: Փիլիպ. ա. 1—2:

Եւ Մելիտոսէն մարդ խրկեց Եփեսոս՝ ու եկեղեցիին երէցները կանչեց: Ու երբոր իրեն եկան, ըսաւ անոնց. Դուք դիտէք, ամէն... Ուրեմն զգուշացէ՛ք ձեր անձերուն և բոլոր հօտին, որուն վրայ Հոգին Սուրբ ձեզ տեսուչ (Եպիսկոպոս) դրաւ, ամէն: Գործ. ի. 17, 18 և 28:

Ասոր համար ես քեզ Կրետէ թողուցի, որ ինչ պակաս բան որ կայ, շտկես, ու ամէն մէկ քաղաքի մէջ ԵՐԻՑՆԵՐ կարգես, ինչպէս որ ես քեզի պատուիրեցի. թէ որ մէկը անմեղադրելի ըլլայ՝ մէկ կնկան մը էրիկ, հաւատացեալ զաւակներ ունենայ, որ անառակութեան համար ամբաստանուած՝ կամ անհնազանդ չըլլան: Քանզի որ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ պէտք է անմեղադրելի ըլլալ՝ Աստուծոյ տնտեսին պէս, ամէն: Տիտ. ա. 5—7:

(23) Բայց դուք Ռաբբի՛ մի՛ կոչուիք. ինչու որ ձեր Ուսուցիչը մէկ մը՝ է, այսինքն Քրիստոս: Մատթ. իգ. 8—10:

կերպով և չէ թէ զեղխութեամբ. մաքուր և առանց աղտեղութեան։

Աստուծոյ խօսքին բոլոր պաշտօնեաները իբրև եղբայր կը համարուին (24), և օրինաւոր չէ բնաւ որ և իցէ մէկուն՝ որ ուրիշներուն վերայ տիրէ (25)։

8. Թէ որ եկեղեցին աշխարհային գործքեր ունի, տասներկու առաքելոց յայտարարութեանը համեմատ (26), քանի սարկաւագ որ պէտք է կ'ընտրէ, Պօղոս առաքեալին Տիմոթէոսին գրած առաջին թուղթին մէջ յիշ-

---

(24) Յր դուք ամէնքդ եղբայր էք։ Մատթ. իգ. 8։

(25) Պիտէք որ ազգաց իշխան սեպուհածները կը տիրեն անոնց, և անոնց մեծամեծները կ'իշխեն անոնց. բայց ձեր մէջը անանկ պիտի չըլլայ. հապա ձեզմէ ո՛վ որ մեծ ըլլալ կ'ուզէ, անիկայ ձեր սպասաւորը ըլլայ. ու ձեզմէ ո՛վ որ առաջին ըլլալ կ'ուզէ, անիկայ ամենուն ծառայ ըլլայ։ Քանզի Որդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորուիլ ընդունելու, հապա սպասաւորուիլ ընելու, և իր կեանքը շատերուն համար փրկանք մը տալու։ Մարկ. Ժ. 42—45։

Ընթէ վիճակներուն վրայ տիրելով, հապա հօտին օրինակ ըլլալով։ ա Պետ. Ե. 3։

(26) Յր ան օրերը աշակերտները որ շատցան, Հելլենացիներոց կողմէն տրտունջ մը եղաւ Եբրայեցւոց դէմ. ինչու որ իրենց որբևարիները ամէն օրուան ողորմութեան մատակարարուելուն մէջ անտես կ'ըլլային։ Յր տասներկուքը կանչեցին աշակերտներուն բազմութիւնը՝ ու ըսին. Մեզի չվայելը Աստուծոյ խօսքը ձգել, ու սեղաններու ծառայութիւն ընել։ Ասոր համար եղբայրներ՝ ձեզմէ եօթը հոգի ընտրեցէ՛ք՝ բարի վկայուած՝ Հոգւով Սրբով և իմաստութիւնով լեցուն, որ զանոնք աս գործիս վրայ դնենք։ Գործ. Զ. 1—3։

ուած առաքինութիւններն ու աղէկ յատկութիւններ ունեցողները (27)։

9. Եկեղեցւոյ անդամները կը հաղորդուին, Հովիւին և եկեղեցւոյ որոշած ժամանակը. որովհետև Յիսուս Քրիստոս ժամանակ չորոշեց հաղորդութեան համար, բայց միայն ըսաւ. «Ասիկայ ըրէք զիս յիշելու համար. (Ղուկ. իբ. 19.) ինչպէս նաև. «Ամեն զի քանի անգամ որ աս հացը ուտէք, ու աս գաւաթը խըմէք, Տէրոջը մահը կը պատմէք, մինչև որ ինքը գայ։ (ա Կորն. ժա. 26։)

10. Հաղորդութեան ատենը՝ բոլորն ալ նըստարանի վրայ նստուկ կ'ըլլան. և թէ որ քիչ-ւոր ըլլան, հաղորդութեան սեղանին բոլորտիքը կը նստին՝ Քրիստոսի այս սրբազան արարողութիւնը հաստատած ատենը, իր տասներկու առաքելոց հետ նստելուն նման (28)։ Ան

---

(27) Այնպէս ալ սարկաւագները ըլլան ծանրաբարոյ, ո՛չ երկլեզու, ո՛չ գինեսէր, ո՛չ անարդ շահախնդրութեան ետևէ եղող. հապա հաւատքին խորհուրդը պահեն մաքուր խղճմտանքով։ Եւ ասոնք ալ առաջ թո՛ղ փորձուին, ետքը՝ թէ որ անմեղադրելի դտնուին, սարկաւագութեան պաշտօնը կատարեն։ Անանկ ալ անոնց կնիկները՝ ծանրաբարոյ ըլլան, ո՛չ չարախօս, հապա զգաստ, ամէն բանի մէջ հաւատարիմ։ Սարկաւագները մէկ կնկան մը երիկ ըլլան. որ իրենց զաւակներուն ու իրենց տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլան։ Քանզի ա-նոնք որ սարկաւագութեան պաշտօնը աղէկ կը կատարեն, բարի աստիճան մը իրենց կը շահին՝ ու Քրիստոս Հիսուսի վրայ եղած հաւատքին մէջ շատ համարձակութիւն։ ա Տիմ. գ. 8—13։

(28) Ու երբոր իրիկուն եղաւ տասներկուքին հետ սե-

ատենը երէցը՝ ժողովուրդին ներկայութեանը հացը կտրելով, յարմար աղօթք մը կ՚ընէ, և եռքը ամենուն կը բաժնէ (29), կամ ուղղակի իր ձեռքովը և կամ սարկաւագի ձեռամբ։ Յետոյ դաւաթը ձեռքը կ՚առնէ ժողովուրդին առջևը, և բարձր ձայնով նորէն աղօթք կ՚ընէ ու դինին ամենուն՝ կը մատակարարուի (30)։ և Տերունական ընթրիքէն եռքը ժողովքը օրհնութեան երգ մը կ՚երգէ, և ասոր լմննալէն ետև կ՚արձակուին (31)։

11։ Թէ որ ուրիշ եկեղեցիներու անդամներ ներկայ գտնուին, բարեկամաբար կը հրաւիրէ երէցը՝ միասնելուն հետ հաղորդուելու (32)։

զան նստաւ, և այլն։ Մաթ։ ի։ 20։

(29) Յս. *քանի որ անոնք կ՚ուտէին, Յիսուս հաց առաւ՝ օրհնեց ու կտրեց, և տուաւ աշակերտներուն՝ ու ըսաւ։ Առէք՝ կերէք, սա է իմ մարմինս։ Մաթ։ ի։ 26։*

(30) Յս. *դաւաթը առաւ՝ գոհացաւ, ու տուաւ անոնց՝ և ըսաւ։ Ամենքդ ալ խմեցէք ասկէ։ Ինչու՞որ ասիկայ է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի մեղաց թողութեան համար։ Մաթ։ ի։ 27—28։ և ա Կորնթ։ ժա։ 23—26։*

Յս. *Մովսէս առաւ արիւնը, ու ժողովուրդին վրայ սրսկեց, ու ըսաւ։ Ահաւասիկ է ուխտին արիւնը, և այլն։ Եբրայ։ թ։ 8։ և Եբր։ թ։ 19—20։*

(31) Յս. *օրհնութիւն մը երգելէն ետև՝ Ձիթենեաց լեռը ելան։ Մաթ։ ի։ 30։*

(32) Յս. *Ինչու որ մենք շատերնիս մեկ հաց՝ մեկ մարմին ենք։ վասն զի ամենքս ալ ան մեկ հացէն կը վայելենք։ ա Կորնթ։ ժ։ 17։*

12 • Որովհետև հացն ու գինին Աստուծոյ ստեղծած նիւթերն են , և Տէրոջը մահը յիշեցնող նշանակներ են միայն (33) , պաշտելի չեն , այլ միայն բարեպաշտութեամբ և ջերմեռանդութեամբ կը հաղորդուին , քանզի Տէրոջը մարմինն ու արիւնը կը նշանակեն (34) :

13 • Ծոմ բերնով ըլլայ ալ կրնայ հաղորդուիլ , ջրլայ ալ , պարագաներուն նայելով • որովհետև Քրիստոս հացն ու գինին իր աշակերտացը տուաւ , երբոր զատիկը կ'ուտէին (35) , որն որ խորոված գառն էր (36) :

Ինչու որ ամէնքդ ալ Աստուծոյ որդիք էք՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով : Գաղ • գ • 26 :

Ինչու որ դուք ամէնքդ ալ Դէ էք Քրիստոս Յիսուսով : Գաղ • գ • 28 :

Հապա թէ որ լոյսի մէջ քայլենք , ինչպէս որ անիկայ լոյսի մէջ է , իրարու հետ հաղորդութիւն կ'ունենանք : ա Յովհ • ա • 7 :

(33) Վասն զի քանի անգամ որ սա հացը ուտէք , ու սա գաւաթը խմէք , Տէրոջը մահը կը պատմէք , մինչև որ ինքը գայ : ա Կորնթ • ժա • 26—28 :

(34) Վասն զի ան որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ , իր անձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ • ինչու որ Տէրոջը մարմինը չարոշեր : ա Կորնթ • ժա • 29 :

(35) Եւ քանի որ անոնք կ'ուտէին , Յիսուս հաց առաւ օրհնեց ու կոտրեց , և տուաւ աշակերտներուն՝ ու ըսաւ • Առէ՛ք՝ կերէ՛ք , սա է իմ մարմինս • և այլն : Մատ • իգ • 26—30 :

(36) Ամէն մէկը իրեն գառնուկ մը առնէ՝ իրենց հայրերուն տանը համեմատ , այսինքն՝ տան գլուխ մէյմէկ գառնուկ • • • Եւ Իսրայէլի ժողովքին բոլոր բազմութիւնը մորթեն անիկայ՝ իրիկուան դէմ • • • Եւ մէսը ան գիշերը ուտեն , զանիկայ կրակի վրայ խորոված • • • Տէրոջը զատիկն ան է : Ելք • ժբ • 3—11 :

14 • Որոնք որ Քրիստոսի ճշմարտապէս կը հաւատան , չէ թէ միայն իրենք մկրտեալ պիտի ըլլան , բայց նաև մկրտութիւնով իրենց զաւակներն ալ Աստուծոյ նուիրեն (37) , ինչպէս որ Աբրահամ իր զաւակները թլփատութեամբ նուիրեց • և այս բանը ընելով՝ խօսք կու տան հրապարակաւ իրենց զաւակները Տէրոջը օրէնքին և պատուիրանքներուն մէջ կրթելու :

15 • Ընդհանրապէս ծնողքը կը համարուին իրենց զաւակներուն Կնքահայրն ու Կնքամայրը • և քանի որ անոնք կենդանի են , եկեղեցին ուրիշ Կնքահայր և Կնքամայր չփնտռեր , ըստ որում Աստուծոյ խօսքը ասոնց վրայով բան մը չըսեր :

16 • Մկրտութեան համար մաքուր և պարզ ջուր կը գործածուի՝ Յիսուս Քրիստոսի (38) ,

---

Ուստի եմ եղբայրներս՝ երբոր մէկ տեղ կը ժողվուիք ուտելու , իրարո՛ւ սպասեցէք : Իսկ թէ որ մէկը անօթի է , թող իր տանը մէջ ուտէ , որ չըլլայ թէ դատապարտութեան համար ժողվուիք : ա Կորնթ . ժա . 33—34 :

(37) Ես թիւատիր քաղաքէն Ծիրանավաճառ կին մը՝ Լիդիա անուն , որ աստուածավախ մէկ մըն էր , մտիկ կ՚ընէր • որուն սիրտը Տէրը բացաւ Պօղոսին ըսածներուն ուշադրութիւն ընելու : Ու երբոր մկրտուեցաւ ինքը եւ իր տունը , աղաչեց ու ըսաւ • Թէ որ զիս Տէրոջը հաւատացեալը կը սեպէք , իմ տունս մտէ՛ք բնակեցէ՛ք : Գործ • ժգ • 14—15 :

Ստեփանոսին ընտանիքն ալ մկրտեցի : ա Կորն • ա • 16 :

Ինչու որ անհաւատ էրիկը սրբուած է կնիկովը , և անհաւատ կնիկը սրբուած է էրիկովը • ապա թէ ո՛չ՝ ձեր որդիքը պիղծ պիտի ըլլային • բայց հիմա սուրբ են : ա Կորն • է • 14 :

(38) Ես եղաւ որ՝ ան օրերը Յիսուս Գալիլեայի Նազա-

Ներքինիին (39), Կուռնելիոսին (40) և նախկին քրիստոնեաներուն օրինակին հետևելով ընդհանրապէս, հոգւոյն մաքրութիւնը ցուցընելով և իբրև օրինակ Հոգւով Սրբով վերստին ծննդեանը։

17. Մկրտութեան ատենը՝ երէցը յարմար աղօթք մը կ'ընէ մկրտուողին համար. թէ որ չափահաս է՝ իրեն խրատ կուտայ. և թէ որ երախայ է՝ ծնողացը. և ետքը կը մկրտէ ջուր սրսկելով կամ ջուրին մէջ խօթելով՝ մէկ կամ երեք անգամ, ըլլայ աւազանի մէջ և ըլլայ դեռտի մէջ, ծնողացը կամքին և կամ պարագայից նայելով. որովհետև՝ ինչպէս որ մեծ կամ պզտիկ ազգի մը դրօշակը, նոյն ազգը կը ցուցընէ. ասոր պէս ալ մկրտութիւնը՝ ինչ կերպով ալ որ եղած ըլլայ, նոյն բանը կը ցուցընէ (42)։

ընթէն եկաւ, ու Յովհաննէսէն մկրտուեցաւ Յորդանանու մէջ։ Մարկ. ա. 9։

(39) Ու ըսաւ ներքինին. Ահա՝ ջուր, ալ ի՞նչ բան գիս կ'արգիլէ մկրտուելէն... և երկուքին ալ ջուրը իջան՝ Փիլիպպոսը ու ներքինին, և մկրտեց զանիկայ։ Գործ. ը. 36—38։

(40) Արնա՞յ մէկը ջուրը արգիլել որ ասոնք չմկրտուին, որոնք Հոգին Սուրբն ալ ընդունեցին մեզի պէս։ Գործ. Ժ. 47։

(41) Ես ձեզ ջրով կը մկրտեմ. բայց ինձմէ աւելի զօրաւորը կուգայ... անիկայ ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով և կրակով։ Ղուկ. գ. 16։

(42) Նոյի օրերը՝ երբոր տապանը կը շինուէր. որուն մէջը քիչ անձինք՝ այսինքն ութ հոգի ջուրէն ապրեցան. որ մեզ ալ

18 • Ինաւին մէկ ամենափոքրիկ բան մը անդամ չըլլուիր ջուրը օրհնելու համար • և մկրտութիւնը կը կատարուի առանց ճրագի • խունկի , եղի , օծելու , բերնով փչելու , մազը կտրելու և կամ որ և իցէ ուրիշ ասոնց նման արարողութիւններու :

19 • Հաւատացեալներուն մկրտեալ տղաքը հաղորդուելու չեն • քանզի երախայ կը սեպուին , մինչև որ սրտանց ճշմարտութիւնը ընդունած չճանչցուին , և իրենք կամքոնին և կեղեցւոյն հետ միանալ չխնդրեն , որ ատեն՝ եկեղեցին ալ անանկներուն Քրիստոսի վրայ ճշմարիտ հաւատք ունենալուն և անոնց բարի վարուցը վրայով ճիշդ տեղեկութիւն առնելէն ետև , կանոնաւոր անդամի պէս կ՝ընդունի , որով Տէրունական ընթրեացը մասնակից ըլլալու իրաւունքը կ՝ստանան :

ան օրինակին պէս մկրտութիւնը հիմա կ՝ապրեցընէ , (չէ թէ մարմնին աղտը մէկդի ձգելը , հապա բարի խղճմտանքին վկայութիւնը առ Յատուած ,) Յիսուս Քրիստոսի յարութիւնովը • և այլն : ա Պէտ • գ • 20—21 :

Եւ ձեր վրայ՝ մաքուր ջուր պիտի սրսկեմ , ու պիտի մաքրուիք • ձեր բոլոր պղծութիւններէն , ու ձեր բոլոր կուռքերէն ձեզ պիտի՝ մաքրեմ • և ձեզի նոր սիրտ պիտի տամ , ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ , և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ , ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ • և իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ , ու ձեզի՝ իմ օրէնքներուս մէջ քալել պիտի տամ , ու իմ իրաւունքներս պիտի պահէք ու 'ի գործ դնէք : Եզեկ , ԼԶ • 25—27 :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով • Իսրայէլի որդւոցը

20 • Յանցաւոր եղբայրներուն վրայ գրուած ամէն եկեղեցական պատիժները, Քրիստոսի գրած կանոնին համեմատ ըլլալու են՝ որն որ Մատթէոսի աւետարանին մէջ յիշուած է • գլ• ժբ • 15—18 : "Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա՛ յանդիմանէ՛ անիկայ՝ երբոր դուն և ան միանակ էք • Թէ որ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ : Հապա թէ որ մտիկ չընէ քեզի, քու հետդ մէկ ուրիշ մը կամ երկուք ալ առ, որ երկու կամ իրեք վկաներու բերնէ ամէն բան հաստատուի : Եւ թէ որ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ • իսկ թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի : Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի • Երկրի վրայ ինչ որ կապէք, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ • ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ" :

Ի վերայ այսր ամենայնի, եկեղեցիին մի

մէջէն Վատացիները՝ ա՛ռ, ու մաքրէ՛ անոնք : Եւ անոնք մաքրելու համար ասանկ պիտի ընես անոնց • մաքրութեան ջուրը սրսկես անոնց վրայ • Եայլն : Թուոց • ը • 5—7 :

Յովհաննէս ալ Էյենոնի մէջ Սալիմի մօտ մկրտութիւն կ'ընէր • • • Էն առենը վիճաբանութիւն մը եղաւ Յովհաննէսին աշակերտներէն Հրեաներուն հետ՝ մաքրութեան վրայով : Ու եկան Յովհաննէսին ու անոր ըսին • Ռաբբի՝ անիկայ որ քեզի հետ Յորդանանին մէկալ կողմն էր, որուն համար դուն վկայութիւն տուիր, ահա՛ ինքը կը մկրտէ • և ամէնը անոր կուգան : Յով • գ • 23—26 :

միայն պատիժը՝ որ եղբօր մը կամ քրոջ մը կրնայ տալ, բանադրանքն է, որ ասիկա ալ Տէրունական ընթրիքին հաղորդութենէն կրտրելով՝ իրենց հետ մասնակից չընելուն վրայ կը կայանայ (43)։ բայց սակայն Աստուծոյ խօսքը լսելին արգիլուած չէ։ Եկեղեցին անախեմաներու և նզովքներու կայծակներ չթափէր որ և իցէ մէկու մը վրայ (44)։

21։ Աղօթքները յանպատրաստից բերնուց և սրտանց կը զրուցուին, և ան ալ ժողովուրդին հասկրցած լեզուովը։ «Գանգէ թէ որ ես աղօթք ընեմ օտար լեզուով։ ։ ։ անիկայ որ տգետի տեղ կայներ է՝ ինտոր Ամէն պիտի ըսէ քու գոհութիւն տալու ատենդ։ ինչու որ ան քու զրուցածդ չիմանար»։ Ա Կորնթ։ ժդ։ 14—16։

Աղօթք ընողը՝ պէտք է որ միտքը առ Աստուած վերամբառնայ, որ ներկայ է ամէն տեղ (45)։ Հետևաբար անտարբեր բան մըն է՝

---

(43) Բայց հիմա ձեզի գրեցի չխառնուիլ, այսինքն՝ թէ որ մէկը եղբայր ըսուած՝ կամ պոռնիկ ըլլայ, կամ ագահ, կամ կռապաշտ, կամ նախատող, կամ գինով, կամ յափշտակող, անանկին հետ հաց ալ չուտել։ ։ ։ ուստի չարը ձեր մէջէն վերցուցէ՛ք։ Ա Կորն։ Ե։ 11—13։

Իսկ թէ որ մէկը չնազանդիր մեր խօսքին ասա թուղթով, դուք նշանակեցէ՛ք անիկայ, ու անոր հետը մի՛ խառնուիք, որ ամչնայ։ Բայց չքլլայ թէ թշնամի պէս սեպէք անիկայ։ հապա եղբօր պէս խրատեցէ՛ք։ Բ Թես։ գ։ 14—15։

(44) Օրհնեցէ՛ք՝ ու մի՛ անիծէք։ Հռովմ։ ժԲ։ 14։

(45) Սիրէ երկինքը ու երկիրը լցընողը ես չե՞մ՝ կ'ըսէ Տէրը։ Երեմ։ իգ։ 24։

աղօթք ընողին դէպ՝ի որ կողմը երեսը դարձուցած ըլլալը։

22. Բոլոր աղօթքները՝ մի միայն Աստուծոյ կ՝ուղղուին (46), Յիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը (47)։

23. Աղօթք ընողները՝ կամ ոտքի վրայ շտապ կայնուկ, կամ ծնկան վրայ դալով կ՝ընեն՝ ինչպէս որ ուզեն։ Այսու ամենայնիւ՝ ա-

---

–թէպէտ և մեր ամէն մէկէն ալ հեռու չէ. ինչու որ անով կ՝ապրինք և կը շարժինք ու կանք։ Գործ. ԺԷ. 27—28։

(46) Ուստի ասա՛նկ աղօթք ըսէք դուք. Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես, և այն։ Մատթ. Զ. 9։

Բանի մը համար հոգ մի՛ ընէք. հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մեկ տեղ ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ։ Փիլիպ. Դ. 6։

Ձեզի կ՝աղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, ու Հոգւոյն սիրովը, որ ինծի հետ պատերազմակից ըլլաք ձեր աղօթքներուն մէջ առ Աստուած ինծի համար։ Հռով. ԺԵ. 30

(47) Դէ որ իմ անունովս բան մը խնդրէք, անիկայ պիտի կատարեմ։ Յովհ. ԺԴ. 14։

Մինչև հիմա իմ անունովս բան մը չխնդրեցիք. Խնդրէց Է՝ ու պիտի առնէք։ Յովհ. ԺԶ. 24։

Ըրդ՝ մենք որ մեծ Քահանայապետ մը ունինք երկինքը անցած, Յիսուսը՝ Աստուծոյ Որդին... Ուստի ալ համարձակութիւնով մտնենանք շնորհաց աթոռին առջևը, որ ողորմութիւն ընդունինք՝ ու շնորհք գտնենք պէտք եղած առենը մեզի օգնելու։ Եբր. Դ. 14—16։

Ուստի բոլորովին կարող ալ է ապրեցնելու անոնք՝ որ իրմով Աստուծոյ կու գան. որովհետև ինքը միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու։ Եբր. Է. 25։

Բանդի անոր ձեռքովը մենք երկուքնիս ալ մէկ՝ Հոգիով Հօրը մտնելու արտօնութիւնը ունինք։ Եփես. Բ. 18։

մինչև պատշաճ է ոտքի վրայ շիտակ կայնիլը, ինչպէս որ Քրիստոսի ժամանակը սովորութիւն էր (48)։ Տան մէջ ոմանք ոտքի վրայ կը կայնին, և ոմանք ծնկան վրայ կու գան։ Դանիէլ մարգարէն՝ իր տանը մէջ ծնրադրութիւն կ'ընէր (49), ինչպէս նաև Պօղոս առաքեալը՝ իր բարեկամներուն հետ (50), և Պետրոս առաքեալ (51), և Քրիստոս ինքն ալ (52), ծնրադրութիւն ըրին մինակ եղած ատենին։

24. Աւելորդ խօսքերը, և մի և նոյն աղօթքը յաճախ կրկնելը՝ մի և նոյն կրօնական պաշտամունքի մէջ, արգիլուած են (53)։

25. Ծոմապահութիւնը՝ պարագայից նայելով և ամէն մէկուն ուզելովը կ'ըլլայ (54)։

---

(48) Ու երբոր աղօթքի կը կայնիք, (Հայնարէն բնագրին նայելով, "ու երբոր ոտէ վրայ ելլ կայնիք աղօթք ընելով", եւայլն,) ներեցէք թէ որ մէկուն դէմ բան մը ունիք։ Մարկ. ԺԱ. 25։

(49) Օրը երեք անգամ ծունկի վրայ գալով աղօթք կ'ընէր, ու իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իր առջև սովորութեանը պէս։ Դան. Զ. 10։

(50) Անոնց ամենուն հետ ծնկան վրայ գալով՝ աղօթք ըրաւ։ Գործ. Ի. 36։

(51) Պետրոս ալ ամէնը դուրս հանելով՝ ծունկի վրայ եկաւ ու աղօթք ըրաւ։ Գործ. Թ. 40։

(52) Եւ ինքը անոնցմէ զատուեցաւ քարընկեցի մը չափ, ու ծնկան վրայ գալով աղօթք կ'ընէր։ Լուկ. ԻԲ. 41։

(53) Ու երբոր աղօթք կ'ընէք, հեթանոսներուն պէս շատախօս մի՛ ըլլաք. վասն զի կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին։ Մատ. Զ. 7։

(54) Մէկզմէկ մի՛ զրկէք, եթէ ոչ միաբանութեամբ ատենն

Բայց կրօնական կերպով կերակուրներու որոշ-մունք և խարութիւն դնելը՝ ծոմապահութիւն չհամարուիր , բայց մանաւանդ Մանիքեցւոց հին հերետիկոսութեանը և կռապաշտներուն սո-վորութեանը պէս է . ինչպէս է նաև որ և իցէ դասու մարդոց մէջ ամուսնութեան արգելք դնելը (55) :

մը՝ աղօթքի պարապելու համար , ու նորէն իրարո՛ւ դարձէք : ա Կորնթ . է . 5 :

Ու երբոր ծոմ կը պահէք , կեղծաւորներուն պէս տրտումերես մի՛ ըլլաք . . . Բայց դուն երբոր ծոմ կը պահես , գլուխդ օծէ՛ , ու երեսդ լուա՛ , որ մարդոց ծոմ պահողի պէս չերևնես , հապա քու Հօրդ՝ որ գաղտուկ տեղ կը գտնուի , և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ , քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ : Մատթ . դ . 16—18 :

(55) Բայց Հոգին յայտնի կ'ըսէ , թէ ետքի ատենները մէկ քանիները հաւատքէ պիտի ապստամբին , և մոլորեցուցիչ ոգի-ներու , ու դիւաց ուսմունքներու ուշադրութիւն պիտի տան , ստախօսներուն կեղծաւորութեամբը , որոնց խղճմտանքը խան-ձուած է . որոնք ամուսնանալէն պիտի արգիլեն , ու ետ պիտի պահեն կերակուրներէն՝ որ Աստուած ստեղծեր է որ հաւատաց-եալները և ճշմարտութիւնը ճանչցողները գոհութեամբ վայելեն : Ինչու որ Աստուծոյ ամէն ստեղծածը բարի է՝ ու մերժելու բան մը չկայ , թէ որ գոհութեամբ ընդունուի : ա Տիմ . դ . 1—4 :

Զէ՛ թէ ի՞նչ որ բերանը կը մտնէ՝ կը պղծէ մարդը , հապա ի՞նչ որ բերանէն կ'ելլէ՝ անիկայ կը պղծէ մարդը : Մատթ . ԺԵ . 11 :

Ինչու որ Աստուծոյ արքայութիւնը կերակուր ու խմելիք չէ՝ , հապա արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն Հոգւով Սրբով : Հռով . Ժդ . 17 :

Սակայն կերակուրը մեզ Աստուծոյ առջևը չկեցներ : ա Կորնթ . Ը . 8 :

26 • Ամուսիններուն թողուելու հրաման չկայ՝ բայց միայն պոռնկութեան պատճառաւ կրնայ թողուիլ, և ոչ երբէք ստակով (56)։

27 • Պարզոց հոգին Աստուծմէ հեռացընելու հակամիտութիւն ունեցող սնոտի զբօսանքներուն թոյլատուութիւն չտրուիր, ինչպէս են՝ հասարակաց կաբաւները, թատրոնական տեսարանները, բարոյականի դէմ անհամեստ արարուածքները (57)։

---

(56) Բայց ես ձեզի կ'ըսեմ թէ՝ Ով որ իր կնիկը կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի, ինքը պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն, և ո՛վ որ ան արձակուածը առնէ, շնութիւն կը գործէ։ Պարդ. Ե. 32։

(57) Նաև փուչերուն մէջ ինկածը անոնք են՝ որ կը լսեն, բայց հոգերով ու հարստութիւնով և աս կեանքիս ցանկութիւններովը զբաղած ըլլալով, կը խեղդուին, և անպտուղ կ'ըլլան։ Ղուկ. Ը. 14։

Մի՛ խաբուիք • չար ընկերակցութիւնները աղէկ բարքը կ'ապականեն։ Ա Կորնթ. ԺԵ. 33։

Սուգի տուն երթալը կոչունքի տուն երթալէն աղէկ է • վասն զի ամէն մարդուն վախճանը ան է • ու կենդանի եղողը զանիկայ իր սրտին մէջ կը դնէ։ Տրտմութիւնը ծիծաղելէն աղէկ է • վասն զի երեսին արտմութեամբը սիրտը կը զուարճանայ։ Իմաստուններուն սիրտը՝ սուգի տունը, իսկ յիմարներուն սիրտը՝ ուրախութեան տունը կ'ըլլայ։ Յովհ. Է. 2—4։

Նաև գաղտնի բաներ՝ կամ յիմարական խօսքեր՝ կամ խեղկատակութիւն, որ չկայլեր • այլ մանաւանդ գոհութիւն։ Եփես. Ե. 4։

Թէ որ մէկը ուրախ է, Պաղմոս թող երգէ։ Յակ. Ե. 13։

Նաև Պաղմոսներով ու օրհնութիւններով և հոգևոր երգերով մէջերնիդ խօսակցելով, երգեցէք ու Պաղմոս ըսէք Տէրոջը՝ ձեր սրտերուն մէջ։ Եփես. Ե. 19։

Հապա ձեզ կանչող Սուրբին պէս՝ դուք ալ սո՛ւրբ եղէք

28 • Կիրակին՝ որ շաբաթն է, այսինքն՝ Քրիստոնէից հանգստութեան օրն է, և Տէրոջը նուիրուած է Տասնաբանեայ օրէնքին չորրորդ պատուէրին համեմատ (58), տիեզերաց Ստեղծիչը (59), և մարդկային ազգին Փրկիչը յիշելու համար (60), և իբրև օրինակ յաւիտենական երկնային հանգստութեանը • այն Շաբաթին՝ որն որ "Աստուծոյ ժողովուրդին կը մնայ", երբոր երկրի վրայ իրենց գործքերը լմնցրնեն (61):

29 • Առաքելական եկեղեցին՝ սրբոց և հրեշ-

ձեր բոլոր վարմունքներուն մէջ : ա Պետ. ա. 15—16 :

Այսպէս ամէն բանին վախճանը մօտեցեր է. ուստի զգաստ եղէք՝ ու աղօթքի մէջ արթո՛ւն կեցէք : ա Պետ. դ. 7 :

(58) Հանգստութեան օրը մինչդ բեր՝ անիկայ սուրբ պահելու համար : Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդ օրը՝ Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. ան օրը գործ մը պիտի չգործես, ո՛չ դուն՝ ո՛չ քու որդիդ՝ ո՛չ քու աղջիկդ՝ ո՛չ քու ծառադ ու աղախինդ՝ ո՛չ քու անասունդ՝ ո՛չ ալ տանդ մէջ եղած օտարականդ : Քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը՝ ու սրբեց զանիկայ : Եղեր. ի. 8—11 :

(59) Ու օրհնեց Աստուած եօթներորդ օրը, ու սրբեց զանիկայ : Ծննդ. բ. 3 :

(60) Ու Կիրակի (այսինքն՝ Տէրունական) օրը Հոգին իմ վրաս եկաւ : Յայտ. ա. 10 :

(61) Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին դեռ հանգիստ մը կը մնայ : Եբր. դ. 9 :

տակաց տօնախմբութիւնը չկատարեր (62)։ 30. Հրէական և կռապաշտական սովորութիւնները արգիլուած են (63). ինչպէս են՝ կրօնական պաշտամաց ժամանակ ցորեկ ատեն ճրագ վառելը, խնկարկութիւնը, ընծայատուութիւնը և հոգու հացը, պատկերները համբուրելը (64), օրինած ջուր ըսուածը, մարդոց ձեռքով շինուած բաները պաշտելը (65),

---

(62) Ուրեմն ո՞վ է Պօղոսը՝ կամ ո՞վ է Ապողոսը. պաշտօնեաներ են, որոնցմով հաւատացիք. և ինտոր որ Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն. . . Ուստի ո՛չ տնկողը բան մըն է, և ո՛չ ջուր տուողը, հապա Աստուած որ աճեցուց։ Ուրեմն մէկը թո՛ղ չպարծենայ մարդոցմով։ ա Կորնթ. գ. 5—7, և 21։

(63) Անոր համար սաստիկ յանդիմանէ՝ անոնք, որ առողջանան հաւատքին մէջ. ու հնային Հրէական առասպելներուն, և ճշմարտութենէ հեռացող մարդոց պատուէրներուն։ Տիտ. ա. 13—14։

(64) Դուն քեզի կուռք չշինե՛ս, ո՛չ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպագութիւն չընե՛ս, ու զանոնք չպաշտե՛ս. ինչու որ ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս. և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն։ Ելք. ի. 4—6։

(65) Անոնց կուռքերը արծաթ ու ոսկի են. ՄԱՐԴՈՒ ՁԵՌՔԻ ԳՈՐԾՔԵՐ են. բերան ունին՝ բայց չեն խօսիր. աչքեր ունին՝ բայց չեն տեսներ. ականջներ ունին՝ բայց չեն լսեր, քիթ ունին՝ բայց հոտ չեն առներ. ձեռքեր ունին՝ բայց չեն շօշափեր. ոտքեր ունին՝ բայց չեն քալեր, ու իրենց կոկորդովը ձայն չեն հաներ։ Անոնց նման ըլլան անոնք

ղորօրինակ՝ մարդու և կենան արձանները կամ պատկերները (66)։ երէցներուն առջևը ծունկ չոքելը (67) և ուրիշ ծառայական յարգութիւն մատուցանելը։ Քրիստոսի չարչարանաց թատրոնական տեսարանները ցոյց տալ՝ իբրև թէ մեռածի պէս։ քանի որ ինքը կենդանի է և Աստուծոյ աջ կողմը կը կենայ (68)։ մարդոց ոսկորները (69)։ և ուրիշ մասունքները պաշտելը։ խաչհամբոյրը։ խաչ հանելը՝

շինողները։ ու բոլոր անոնց յուսացողները։ Սաղ. ԺԵ. 4—8։

(66) Ուրեմն ձեր հոգիներուն աղէկ զգուշութի՛ւն ըրէք։ Ընդլայ որ անօրինիք՝ ու ձեզի կուռք մը կամ ո՛ր և իցէ բանի պատկերը՝ թէ՝ արուի և թէ էգի նմանութիւնը։ ։ ։ չինէք։ Բ Օրէ. Դ. 15—18։

Կուռքերով ալ ընցուն է անոնց երկիրը։ իրենց ձեռացը գործքերուն երկրպագութիւն կ՚ընեն, անոնց՝ որ իրենց մատերը շինեցին։ Եր. ռամիկ մարդը ծռեցաւ, ու ազնուականը խոնարհեցաւ, և անոնց պիտի չներես։ Եսայ. Բ. 8—9։

(67) Ու երբոր Պետրոս ներս կը մտնէր, Կոռնէլիոս անոր դիմացը ելաւ, ու անոր ոտքը խնալով՝ երկրպագութիւն կ՚ընէր։ Բայց Պետրոս անիկայ կանգնեցուց՝ ու ըսաւ. Էլե՛ր կայնե՛, ես ինքնս ալ մարդ եմ։ Գործք. Ժ. 25—26։

(68) Բայց ասիկայ մեկ զոհ մը մատուցանելով մեղքերու համար, մշանջենաւորապէս Աստուծոյ աջ կողմը նստաւ։ Եբր. Ժ. 12։

(69) Ով որ մեռած մարդու մը մարմինին դպչի՝ ու ինքզինքը չմաքրէ, Տէրոջը խորանը կը պղծէ. և ան անձը Իսրայէլէն պիտի կորսուի։ ։ ։ Եր ո՛վ որ դպչի դաշտի վրայ սրով սպաննուածի մը՝ կամ իր մահովը մեռածի մը՝ կամ մարդոս ոսկորի մը՝ և կամ դերեզմանի մը, եօթը օր անմաքուր պիտի ըլլայ։ Թիւ. Ժթ. 13—16։

իբրև պահպանութիւն Սատանային չար ազդեցութեանը դէմ, կամ թէ սեղանը նստելու և սեղանէն ելլելու ատենը աղօթք ընելու տեղ. բժժանքը (նոր-սիսայ կամ համայիլ), մեռնողներուն հոգւոյն համար աղօթքը՝ պաշտօնը՝ և այլ ասոնց նման բաները :

31 • Առաքելական եկեղեցին կ'ընդունի և կը պահէ մեծ խնամքով Մկրտութեան և Տէրունական ընթրեաց երկու խորհուրդները՝ որոնք ամէն ատեն պիտի հաստատ մնան իբրև Աստուածային հրամանաւ եղած, և եկեղեցւոյ ալ շատ օգտակար սահմանադրութիւնները : Սակայն աս սահմանադրութիւններուն չյարեր խորհուրդ կամ գաղտնիք գաղափարը • որովհետև՝ անոնք որ Փրկագործութեան համար են, Աստուծոյ խօսքին միջոցովը յայտնուած են • Հաղորդութիւնը՝ յայտնի բան մըն է • ով որ հացը կ'ուտէ և գինին կը խմէ, Քրիստոսի մահը կը յիշէ • Մկրտութիւնը՝ հաւատքին հրապարակաւ դաւանութիւնն է ու կնիքը, և Սուրբ Հոգւոյն միջոցովը եղած վերստին ծննդեան նշանակը : Այն բանը կրնայ ըսուիլ ան միւս բաներուն համար ալ՝ որոնց ոմանք խորհուրդ կ'ըսեն • զոր օրինակ Պսակը՝ Էրիկ մարդու մը կնկան հետ ամուսնանալն է՝ վկաներու ներկայութեանը, անոնց գտնուած երկրին օրինացը համեմատ • Քահանայութեան կարգը՝ մէկ արարողութիւն մըն է, որով սուտ կարգաւորներէն պաշտպանելու և կարգաւո-

բութիւն պահելու համար՝ աւետարանին քա-
ղաքացի մը պէս կը ճանչցուի, կամ հրապարա-
կաւ Քրիստոսի հօտին հովիւներուն ընկերու-
թեանը կ'ընդունուի։ Դրոշմը՝ ամենեին Քրիս-
տոսէն պատուիրուած չէ։ Վերջին օծումը՝
յայտնի բան մըն է։ Հիւանդը եղով կ'օծէին՝
անոնք առողջացընելու յուսով, և իրօք ալ
հիւանդները կ'առողջանային առաքելոց ժամա-
նակը՝ խոստմունքին համեմատ, թէ "Տէրը ա-
նիկայ ոտք պիտի հանէ"։ (Յակ. Ե. 15։)
Բայց հիմա՝ ալ հրաշք չըլլար, ոչ ալ քրիս-
տոնեաները զանազան լեզուներ կը խօսին՝ ա-
ռանց սորվելու, և ոչ ալ հիւանդները կը բը-
ժշկուին՝ հիւանդը եղով օծելով։ Խոստովա-
նութիւնն ալ՝ նմանապէս յայտնի բան մըն է։
Քահանային իր մեղքերը կը խոստովանի և խը-
րատ կ'առնէ։ բայց և այնպէս՝ Խոստովանու-
թիւնը Տէրոջմէն հրամայուած չէ։ Տէրը կ'ըսէ
"Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէք,
ու աղօթք ըրէք իրարու համար՝ որ բժշկուիք"։
(Յակ. Ե. 16.) այսինքն. պէտք է որ եղ-
բայր մը՝ ուրիշ եղբօր մը խոստովանի անոր
դէմ գործած մեղքը, կամ թէ որ դէշութիւն
մը ըրեր է՝ ան ալ նմանապէս խոստովանի։ Ա-
ռաքեալը չըսեր "խոստովանեցէք քահանաներուն,
այլ իրարու"։ Սակայն թէ որ մէկը ուզէ իր
մեղքերը խոստովանիլ քահանայի մը՝ միայն ան-
կէ խրատ առնելու մտօք, կրնայ այնպէս ընել.
բայց չէ թէ իբրև Աստուծմէ պատուիրուած
բանի մը պէս ընելու է։

Բայց թէ որ մէկը՝ հրապարակաւ կը դայ-թակղեցընէ եկեղեցին իր մեղանչելովը, և Քրիստոսի անունը կը վնասէ. ինչպէս օրինակի համար՝ գինովութիւն ընելով, ստախօսութեամբ, պոռնկութեամբ, շնութեամբ, կամ ցանկութեամբ, և կամ ուրիշ ասոնց նման մեղքով մը, այսպիսի պարագաներու մէջ՝ պէտք որ մեղքը գործողը նաև հրապարակաւ ալ իր յանցանքը խոստովանի եկեղեցիին առջևը՝ առաջադրութիւն ընելով որ իր վարքը պիտի շտկէ, և հրաժարի ան մեղքէն՝ որով որ յանցաւոր գտնուեցաւ: "Ընոնք որ մեղք կը գործեն, ամենուն առջևը յանդիմանէ, որ ուրիշներն ալ վախնան" : Թիմ. Ե. 20:

Ամէն մէկը պէտք է որ Աստուծոյ խոստովանի ամէն օր՝ բոլոր իր մեղքերը. թէ յայտնի գործածն ըլլայ և թէ գաղտնի, թէ խօսքով և թէ մտքով. և անկէ թողութիւն խնդրելու է Յիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը (70):

---

(70) Եւ թէ որ մէկը մեղք գործելու ըլլայ, Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս արդարը. և անիկայ մեր մեղքերուն քաւութիւն է: ա Յովհ. բ. 1—2:

Ու անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսին արիւնը՝ մեզ ամէն մեղքէ կը սրբէ: ա Յովհ. ա. 7:

ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Առաքելական եկեղեցին՝ իրեն առաջնորդ ունենալով Սուրբ Գիրքը, կը հաւատայ և կը դաւանի.

1. Թէ՝ մէկ Աստուծմէ զատ Աստուած չը-կայ (1), արարիչ և պահպանիչ ամէն բանի, երևելեաց և անտեսանելեաց (2). ինքը կը կառավարէ բոլորը իր կամքին խորհուրդին պէս (3). ինքն է մի միայն մեր պաշտելու և երկրը-

---

(1) Լսէ՛ ո՛վ Իսրայէլ, մեր Տէր Աստուածը՝ մէկ Տէր մը՛ն է։ Բ. Օրէն. Ղ. 4։ և Մարկ. ԺԲ. 29։

Նա եմ Տէրը, ու ուրիշ մը չկայ... ո՛վ երկրիս բոլորը ծայրերը՝ ինձի՛ նայեցէք, որ փրկուիք. քանզի ես եմ Աստուած, և ինձմէ ուրիշը չկայ։ Եսայ. խե. 5—22։

Սակայն Աստուած մէկ է։ Գաղ. Գ. 20։

(2) Ինչու որ ամէն բաները անկէ, ու անով, և անոր համար են. իրեն փառք յաւիտեանս։ Հռով. ԺԱ. 36։

Ակիզբէն Աստուած երկինքը ու երկիրը ստեղծեց։ Ծնն. Ա. 1։

Ինչու որ անով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ կ'երևնան և անոնք որ չեն երևնար, թէ աթոռները՝ թէ տէրութիւնները՝ թէ պետութիւնները՝ թէ իշխանութիւնները. բոլոր բաները անով՝ ու անոր համար ստեղծուեցաւ. ու անիկայ ամէն բանէն առաջ է, և ամէն բան անով հաստատ կը կենայ։ Կողոս. Ա. 16—17։

Ինչու որ անով կ'ապրինք և կը շարժինք, ու կանք։ Գործ. ԺԷ. 28։

(3) Առաջուց որոշուած ըլլալով անոր նախասահմանութիւնը, որ ամէն բան իր կամքին խորհրդովը՝ ի գործ կը դնէ։ Եփես. Ա. 11։

պագելու առարկան (4), և ինքն անիմանալի կերպով իր էութեանը մէջ է՝ իբրև Հայր, Որդի, և Սուրբ Հոգի (5)։

---

(4) Թէ Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկայ պաշտես։ Մատ. դ. 10։

Արժանի ես Տէր՝ փառք ու պատիւ և զօրութիւն առնելու. ինչու որ ամէն բան դուն ստեղծեցիր, ու քու կամքովդ եղան ու ստեղծուեցան։ Յայտ. դ. 11։

Ու ես Յովհաննէս լսեցի ու տեսայ աս բաները. և երբ լսեցի ու տեսայ, ինկայ որ երկրպագութիւն ընեմ՝ ան հրեշտակին ոտքերուն առջևը՝ որ աս բաները ինձի կը ցուցնէր։ Եւ ըսաւ ինձի. զգուշացի՛ր՝ մի՛ ըներ. ինչու որ ես քուկին՝ ու քու եղբայրներուդ մարգարէներուն՝ ու աս գրքիս խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ. Աստուծոյ երկրպագութի՛ւն ընէ։ Յայտ. իբ. 8—9։

Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ կը թռչէր երկինքին մէջ. և ունէր յաւիտենական աւետիսը՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովուրդներուն՝ որ երկրի վրայ կը բնակին. և մեծ ձայնով կ'ըսէր. Աստուծմէ վախցէ՛ք ու փառաւորեցէք անոր... ու երկրպագութի՛ւն ընէք՝ անոր որ ստեղծեց երկինքը ու երկիրը՝ և ծովը ու ջուրերուն աղբիւրները։ Յայտ. ժդ. 6—7։

(5) Ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ։ Յովհ. ժդ. 9։

Սակայն Որդին կ'ըսէ. Տէրս աթոռդ ո՛վ Աստուած՝ յաւիտեանս յաւիտենից է... և դուն ո՛վ Տէր՝ սկիզբէն երկրին հիմերը դրիր, ու երկինքը քու ձեռքերուդ գործն է։ Եբր. ա. 8—10։

Շատ մասերով ու շատ կերպերով առաջուց խօսելով Աստուած հայրերուն հետ մարգարէներով։ Եբր. ա. 1։

Ինչու որ մարգարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չարտուեցաւ. հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան։ Բ Պետր. ա. 21։

Մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Մատ. իբ. 19։

2 • Թէ՝ բարոյական կատարելութիւնը կը կայանայ ։ բոլոր սրտով՝ բոլոր անձով և բոլոր մտքով ու բոլոր զօրութիւնով զԱստուած սիրելուն մէջը ։ և նաև իր դրացին ալ իր անձին պէս (6) ։

3 • Թէ՝ մարդը կատարեալ ստեղծուած ըլլալով (7) ։ ինկաւ իր բարոյական անմեղութեան

Բայց մխիթարիչը՝ Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անուանով պիտի խրկէ ։ անիկայ ձեզի բոլորը պիտի սորվեցընէ ։ և ի՛նչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ ։ Յովհ • ԺԴ • 26 ։

Բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ կ'ըսէ ։ պիտի չներուի սանոր ։ ո՛չ աս աշխարհիս մէջ՝ և ոչ գալու աշխարհին մէջ ։ Մատ • ԺԲ • 82 ։

Զասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք ։ Բ Կորն • Զ • 16 ։

Չէք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգւոյն՝ որ ձեր մէջն է ։ Ա Կորն • Զ • 19 ։

(6) Եւ Յիսուս ըսաւ անոր • Տէրուն Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ • Այս է առաջին ու մեծ պատուիրանը ։ Ու երկրորդը ասոր նման։ Տէրուն ընկերդ սիրես քու անձիդ պէս ։ Այս երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները ։ Մատ • ԻԲ • 37—40 • և Ղուկ • Ժ • 27 ։

Ուրեմն օրէնքին լրումը սէրն է ։ Հռովմ • ԺԳ • 10 ։

Ինչու որ պատուիրանքին վախճանը սէր է՝ սուրբ սրտով ու բարի խղճմտանքով և անկեղծ հաւատքով ։ Ա Տիմ • Ա • 5 ։

(7) Եւ Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը • • • և Աստուած իր ամէն ըրածը տեսաւ ։ և ահա՛ շատ բարի էր ։ Ծնն • Ա • 27 և 31 ։

Ահա՛ միայն ասիկայ գտայ՝ որ Աստուած մարդը ուղիղ ստեղծեց • բայց անոնք շատ դաւքեր վնտռեցին ։ Ղուկ • Է • 29 ։

վիճակէն՝ արդիւնաւոր պտուղէն ուտելով (8)։ Եւ թէ՝ այս օրուան օրս բոլոր մարդիկները բնականապէս ազատանուած են (9), և չեն կրնար փրկուիլ, բայց միայն Յիսուս Քրիստոսով (10)։

---

(8) Յե Ադամին ըսաւ. Որովհետև դուն քու կնկանդ խօսքը մտիկ ըրիր, և ան ծառէն կերար, որուն համար պատուիրեցի քեզի՝ ըսելով, Չուտես անկէ, երկիրը քու պատճառովդ անիծեալ ըլլայ. կենացդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուտես անկէ. և փուշ ու տատասկ բուսցընէ քեզի, և դաշտին խոտը ուտես։ Երեսիդ քրտինքովը ուտես քու հացդ, մինչև հող դառնալդ, քանզի անկէ առնուեցար, ինչու որ հող էիր դուն, ու հող պիտի դառնաս։ Ծն. գ. 17—19։

Մէկ մարդէ մը մեղքը աշխարհք մտաւ, և ան մեղքէն մահը։ Հռով. ե. 12։

(9) Ինչու որ առաջուց մեղադրեցինք Հրէաները և հեթանոսները՝ թէ ամէնքը մեղաց տակ են. ինչպէս որ գրուած է, թէ Արդար մը չկայ՝ ո՛չ մէկ հատ մը. . . Որպէս զի ամէն բերան գոցուի, և բոլոր աշխարհ դատապարտուած ըլլայ Աստուծոյ առջևը։ Հռով. գ. 9—19։

Քանզի մեր դատումը սա է որ՝ եթէ մէկը ամենուն համար մեռաւ, ուրեմն ամենն ալ մեռած էին։ Բ Կորն. ե. 15։

Թէ որ ըսենք՝ թէ Մենք մեղք մը չունինք, ինքզինքնիս կը խաբենք, ու մեր մէջը ճշմարտութիւն չկայ։ Ա Յովհ. ա. 8։

Ինչու որ ամենքը մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն պակսած են։ Հռով. գ. 23։

(10) Յե ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ։ Գործ. դ. 12։

Յե անոր շնորհքովը ձրի կ՚արդարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկութեամբը։ Հռով. գ. 24։

Յե ինտոր որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, ասանկ ալ պէտք է որ Որդին Մարդոյ բարձրանայ. որ ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝ չկորսուի հապա յաւիտենական կեանք ունենայ։ Յովհ. գ. 14—15։

4 • Թէ՝ Յիսուս Քրիստոս Աստուած է մարմնով յայտնուեցաւ (11), և ինքը ծնաւ մարմնոյ կողմանէ Կոյս Մարիամէն՝ Հոգւոյն Սրբոյ միջոցովը (12) • մարդ ըլլալով անհայր, և Աստուած անմայր (13):

5 • Թէ՝ ինքը մահ ճաշակեց ամէն մարդոց համար (14), որ ամէն ով որ հաւատայ անոր՝ յաւիտենական կեանք ունենայ (15) • և

նաւ արիւն չթափուած թողութիւն չըլլար: ԵԲՐ • Թ • 22:

(11) Եր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայով՝ որ մարմնոյ կողմանէ Դաւիթի սերունդէն եղաւ, ան որ սրբութեան Հոգիին կողմանէ Որդի Աստուծոյ յայտնուեցաւ զօրութեամբ, մեռելներէն յարութիւն առնելով: Հռով • ա • 3—4:

Եւ բանը մարմին եղաւ, ու մեր մէջը բնակեցաւ: Յովհ • ա • 14:

(12) Յո՛վսէփ՝ Դաւիթի որդին, մի՛ վախնար քեզի առնելը քու Մարիամ կնիկդ, ինչու որ անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգիին է: Մատ • ա • 20 • և Լուսա • ա • 35:

(13) Բռանց հօր՝ առանց մօր՝ ազգահամար չունեցող, որ ո՛չ անոր օրերուն սկիզբը կայ՝ ո՛չ ալ կեանքին վերջը • և Աստուծոյ Որդւոյն նման ըլլալով՝ կը կենայ ու կը մնայ միշտ քահանայ: ԵԲՐ • Է • 3:

Ասիկայ է ամենուն Տէրը: Գործ • Ժ • 36:

(14) Սակայն Յիսուսը փառքով ու պատիւով պսակուած կը տեսնենք՝ որ հրեշտակներէն քիչ մը վար եղած էր՝ մահուան չարչարանքին համար, որ Աստուծոյ շնորհքովը ամենուն համար մահ ճաշակէ: ԵԲՐ • Բ • 9:

(15) Որ ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ: Յովհ • Գ • 15 • և 16:

Ո՛մարի՛ւ ճշմարի՛ւ կ'ըսեմ՝ ձեզի, թէ ան որ ինծի կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի: Յովհ • Զ • 47:

իր արիւնովը ձրի կ՚արդարանան (16)։ Աստուծոյ շնորհքովը և չէ թէ գործքերէն (17)։

6 • Թէ՝ առանց հաւատքի անկարելի է Աստուծոյ ընդունելի ըլլալ (18)• և թէ՝ ճշմարիտ հաւատքին պտուղը և փորձը, բարեգործութիւններն են (19)։

---

(16) Ուրեմն հիմա որ իր արիւնովը արդարացանք, ո՛րչափ աւելի իրմով պիտի ազատինք բարկութենէն։ Հռով. Ե. 9։

Որ անով փրկութիւն ունինք մենք իր արեանը միջոցով, մեղայ թողութիւնը՝ իր շնորհքին ճոխութեանը չափովը։ Եփես. Ա. 7։

(17) Վասն զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով. և ասչէ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգևն է. չէ՝ թէ գործքերէն, որ մէկը չպարծի։ Ինչու որ մենք անոր ձեռագործն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած բարի գործքերու համար, որոնց Աստուած առաջուց պատրաստեց մեզ, որ անոնց մէջը քալենք։ Եփես. Բ. 8—10։

Երդարը հաւատքէն պիտի ապրի։ Գոպ. Գ. 11։

Մարդ օրէնքին գործքերէն չկրնար արդարանալ։ Գոպ. Բ. 16։

(18) Բայց առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ։ Եբր. Ժա. 6։

(19) Ինչ օգուտ է՝ ե՛ղբայրներս, թէ որ մէկը ըսէ՝ թէ հաւատք ունի, ու գործք չունենայ. միթէ հաւատքը կրնա՞յ փրկել զանիկայ։ Թէ որ եղբայր մը կամ քոյր մը մերկ ըլլայ՝ կամ օրուան կերակուրին կարօտ, ու ձեզմէ մէկը անոնց ըսէ, գացէ՛ք խաղաղութեամբ, տաքցէ՛ք ու կշտացէ՛ք. և մարմինին պէտք եղած բաները անոնց չտաք, ի՞նչ օգուտ է։ Այսպէս ալ հաւատքը՝ թէ որ հետը գործ չունենայ, ըստ ինքեան մեռած է։ Ան գործքերով հաւատքը կատարեալ եղաւ. . . Վասնզի ինչպէս որ մարմինը առանց հոգիի մեռած է, նոյնպէս ալ հաւատքը առանց գործքերու մեռած է։ Յակ. Բ. 14—17 և 22 և 26։

7 • Թէ՝ ով որ ճշմարտապէս անոր կը հաւատայ, Հոգւովն Սրբով վերստին կը ծնանի • և ասանկով Աստուծոյ որդի կ՚ըլլայ և անոր ժառանգը (20) :

8 • Թէ՝ մէկ միջնորդէն ուրիշ չկայ մարդոց և Աստուծոյ մէջ, Յիսուս Քրիստոս մարդը (21) • Թէ՝ միայն անով կրնանք մօտենալ Հօրը (22), որուն և Սուրբ Հոգւոյն հետ ինքն է իբրև Աստուած՝ հաւասարապէս պաշտելի և փառաւորեալ (23) :

---

(20) Բայց անոնք որ զինքը ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անունը • որ անոնք ո՛չ արիւնէ և ո՛չ մարմնի կամքէ՝ ո՛չ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան : Յովհ • ա • 12—13 :

Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին, Թէ մենք Աստուծոյ որդիքն ենք • և Թէ որ որդիք, ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ՝ ու Քրիստոսի ժառանգակիցներ : Հռովմ • ը • 16—17 :

Եւ որովհետև դուք որդիք էք, Աստուած իր Որդիին Հոգին ձեր սիրտերուն մէջը խրկեց, որ կ՚աղաղակէ Երբա՛յ Հայր : Ուստի ալ ծառայ չես, հապա որդի • և Թէ որ որդի, ալ Աստուծոյ ժառանգը Քրիստոսով : Գաղ • դ • 6—7 :

(21) Քանզի մէկ Աստուած մը կայ, ու մէկ միջնորդ մը Աստուծոյ ու մարդոց մէջը՝ Քրիստոս Յիսուս մարդը : ա Տիմ • բ • 5 :

(22) Յիսուս ըսաւ անոր • Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը ու կեանքը : Յովհ • ժդ • 6 :

Քանզի անոր ձեռքովը մենք երկուքնիս ալ մէկ Հոգիով Հօրը մօտենալու արտօնութիւնը ունինք : Եփես • բ • 18 :

(23) Որ ամէնը պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը

9 • ԹԷ՝ Սուրբ Գիրքը, Հին և Նոր Կտակարանները, աստուածային ներշնչութեամբ ըլլալով, միմիայն անսխալ կանոն և առաջնորդն են հաւատոյ և մարդոյ գործքերուն (24) :

պատուէն • ան որ Որդին չպատուեր, զանիկայ խրկող Հայրը չպատուեր : Յովհ. ե • 23 :

Եթոռին վրայ նստողին՝ և Գառնուկին՝ օրհնութիւն ու պատիւ և փառք ու զօրութիւն յաւիտեանս յաւիտենից : Յայտ • ե • 13 :

Նէ դարձեալ՝ երբոր անդրանիկը աշխարհը կը մտցնէ, կ'ըսէ • Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թո՛ղ ընեն : Եբր • ա • 6 :

(24) Ամէն խօսքերուդ յայտնութիւնը լոյս կուտայ, ու միամիտները իմաստուն կ'ընէ : Սաղմ • ՃԺԹ • 130 :

Տէրոջը օրէնքը կատարեալ է • հոգին կը նորոգէ • Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է • ոգեկաը իմաստուն կ'ընէ : Տէրոջը կանոնները շիտակ են • սիրտը կ'ուրախացընեն • Տէրոջը պատուիրանքները պայծառ են • աչքերուն լոյս կուտան : Տէրոջը վախը սուրբ է յաւիտեան կը մնայ • Տէրոջը դատաստանները ճշմարիտ ու բոլորովին արդար են : Յոնկալի են անոնք ոսկիէն, ու շատ փորձուած ոսկիէն • մեղրէն անուշ են, ու խորիսխէ կաթած մեղրէն • • • ու զանոնք պահելուն վարձքը շատ է : Սաղմ • ԺԹ • 7—11 :

Սակայն դուն հաստատո՛ւն կեցիր ան բաներուն մէջը՝ որ սորվեցար ու հաւատացիր, ինչու որ գիտես թէ որմէ սորված ես • նաև քու մանկութենէդ 'ի վեր սուրբ գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկութիւնը՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը : Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիտկելու, ու արդարութեան խրատելու համար • որ Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու պատրաստուած : Բ Տիմ • Գ • 14—17 :

10 • Թէ՝ ամէն մարդ որ Յիսուս Քրիստոսի կը հաւատայ, պէտք է որ մկրտուի յանուն

Նէ մարգարէական խօսքն ալ ունինք՝ որ աւելի հաստատուն է. ու աղէկ կ'ընէք՝ թէ որ անոր մտադրութիւն ընէք, որպէս թէ մութ տեղը լոյս տուող ճրագի մը, մինչև որ ցորեկը լուսնայ ու արուսեակը սրտերնուդ մէջը ծագի։ Բայց առաջ աս գիտնաք, որ գրոց ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի։ Ինչու որ մարգարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չորուեցաւ. հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան։ բ Պետ. ա. 19—21։

Բայց թէ որ մենք՝ կամ երկինքէն հրեշտակ մը գայ աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ որ մենք աւետարանեցինք ձեզի, նզովեա՛լ ըլլայ։ Գաղ. ա. 8։

Գիրքերը քննեցէ՛ք։ Յովհ. ե. 39։

Դուք մոլորած էք, որ ոչ գիրքերը գիտէք։ Մատ. իբ. 29։

Պօղոս ալ իր սովորութեանը պէս անոնց մէջը մտաւ, և իրեք շաբաթ օր խօսեցաւ անոնց հետ գիրքերէն։ Գործ. ժէ. 2։

Անոնք Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին, որ Աստուծոյ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդունեցին, և ամէն օր Գիրքերը կը քննէին՝ թէ աս բաները աս՞նկ է։ Գործ. ժէ. 11։

Աստուծոյ ամէն խօսքերը մաքուր են. անիկայ իրեն ապաւինողներուն ասպար է։ Դուն անոր խօսքերուն վրայ բան մի աւելցընէր, որ չըլլայ թէ քեզ յանդիմանէ, որ դուն ստախօս երևնաս։ Առակ. Լ. 5—6։

Էս քեզի ինչ որ կը պատուիրեմ, զգուշացի՛ր ան ընելու. անոր վրայ բան մը չաւելցընե՛ս, ու անկէ բան մը չպակսեցընե՛ս։ բ Օրէն. ժբ. 32. և դ. 2։

Թէ որ մէկը ասոնց վրայ բան մը աւելցընէ, Աստուած ալ անոր վրայ պիտի աւելցընէ ան հարուածները՝ որ աս գրքիս մէջը գրուած են։ Եւ թէ որ մէկը աս մարգարէութեանս գրքին խօսքերէն բան մը պակսեցընէ, Աստուած ալ անոր բաժինը

Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ (25) ։

11 • Թէ՝ մարմինը մեռնելէն ետև , հոգին անմիջապէս կ՚երթայ , իր հոգևոր վիճակին համեմատ՝ կամ արքայութիւն , կամ դժոխք (26) ։

12 • Թէ՝ մեռելներուն յարութիւն պիտի ըլլայ , թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն (27) • Թէ՝ արդարութեամբ պիտի դատուին

պիտի պակսեցընէ կենաց ծառէն և սուրբ քաղաքէն՝ որ ասոնք գրքիս մէջը գրուած են ։ Հայտ • իբ • 18—19 ։

(25) Ուրեմն դացէ՛ք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք • մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ • սորվեցուցէ՛ք անոնց որ ան ամէն բաները պահեն՝ ի՛նչ որ ես ձեզի պատուիրեցի ։ Մատ • իը • 19—10 ։

Եւ շատ մը անոր աչքերէն թեփերու պէս բաներ ինկան • և իսկոյն տեսաւ , ու եղաւ մկրտեցաւ ։ Գործ • թ • 18 ։

Արնա՞յ մեկը ջուրը արգիլել որ ասոնք չմկրտուին , որոնք Հոգին Սուրբն ալ ընդունեցին մեզի պէս ։ Ու հրաման ըրաւ որ Տէրոջը անունովը մկրտուին ։ Գործ • ժ • 47—48 ։

(26) Եւ եղաւ որ ան աղքատը մեռաւ , ու հրեշտակները Աբրահամին գոգը տարին զանիկայ • հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ ։ Եւ դժոխքին մէջը երբոր տանջանքի մէջ էր , իր աչքերը վերցընելով հեռուէն տեսաւ Աբրահամը , ու Ղազարոսը անոր գոգը հանգիստ նստած ։ Ղուկ • ժզ • 22—23 ։

Յիսուս ալ ըսաւ անոր • Ամէն՝ ի՛ըսեմ քեզի • Դուն այսօր իմ հետս դրախտին մէջը պիտի ըլլաս ։ Ղուկ • իգ • 43 ։

Երկու կողմանէ ալ նեղի մէջ եմ , մեկնելու ու Քրիստոսի հետ ըլլալու փափաք ունենալով • քանզի ան՝ շատ աւելի աղէկ է ։ Փիլիպ • ա • 23 ։

(27) Եւ յոյս ունիմ առ Աստուած՝ ինքնոր որ ասոնք ալ ակնկալութիւն ունին , որ մեռելոց յարութիւն պիտի ըլլայ , թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն ։ Գործ • իգ • 15 ։

Յիսուս Քրիստոսի ձեռքովը (28)։ երբոր իր փառքովը գայ (29)։ թէ՝ ամէն մէկը պիտի առնէ իր մարմնովը ըրածին փոխարէնը։ իր գործոցը համեմատ թէ բարի և թէ չար (30)։ և չարագործներն ու ճշմարտութեանը չընազանդողները։ յաւիտենական տանջանքը պի-

---

(28) Ինչու որ ինքը մէկ օր մը սահմանեց։ որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ ան մարդուն ձեռքովը։ որն որ որոշեց։ ու ամենուն հաւատացուց՝ զանիկայ մեռելներէն յարուցանելով։ Գործք։ ԺԷ։ 31։

(29) Ու երբոր Որդին մարդոյ իր փառքովը գայ։ և բոլոր սուրբ հրեշտակները իր հետը։ ան ատենը իր փառաց աթոռը պիտի նստի։ և անոր առջևը պիտի ժողվուին բոլոր ազգերը։ ու զանոնք իրարմէ պիտի զատէ։ ինչպէս որ հովիւ մը ոչխարները այծերէն կը զատէ։ և ոչխարները իր աջ կողմը պիտի կայնեցնէ։ ու այծերը՝ ձախ կողմը։ Ան ատենը թագաւորը իր աջ կողմը եղողներուն պիտի ըսէ։ Եկէք իմ Հօրս օրհնածները։ աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք։ ։ ։ Ան ատենը ձախ կողմը եղողներուն ալ պիտի ըսէ։ Մեկդի դացէք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը։ որ պատրաստուած է Սատանային՝ ու իր հրեշտակներուն։ Մատթ։ ԻԵ։ 31—41։

(30) Ան որ ամէն մէկուն իր գործքերուն փոխարէնը պիտի հատուցանէ։ ։ ։ Ան օրը որ Աստուած մարդոյ ծածուկ բաները պիտի դատէ Հիսուս Քրիստոսի ձեռքովը՝ իմ քարոզած աւետարանիս համեմատ։ Հռովմ։ Բ։ 6—16։

Վասն զի պէտք է որ ամէնքս ալ Քրիստոսի ատեանին առջևը ներկայանանք։ որ ամէն մէկը իր մարմնովը ըրածներուն փոխարէնը առնէ ինչ որ գործեր է։ թէ բարի և թէ չար։ Բ Կորնթ։ Ե։ 10։

տի երթան , և արդարները յաւիտենական կեանքը (31) :

---

(31) Եւ տեսայ պզտիկ ու մեծ մեռելները՝ որ աթոռին առաջեւը կայնած էին . ու գիրքերը բացուեցան , և ուրիշ գիրք մը բացուեցաւ՝ այսինքն կենաց գիրքը . և գիրքերուն մէջը գրուածներէն մեռելները դատուեցան իրենց գործքերուն համեմատ : Եւ ծովը իր մէջի մեռելները տուաւ , ու մահը և դժոխքը իրենց մէջի մեռելները տուին . ու ամէն մէկը իրենց գործքերուն համեմատ դատուեցան : Եւ մահը ու դժոխքը կրակի լիճին մէջը ձգուեցան . ասիկայ է երկրորդ մահը : Ու ո՛վ որ կենաց գրքին մէջը գրուած չգտնուեցաւ , կրակի լիճին մէջը ձգուեցաւ : Յայտ . ի . 12—15 :

Յաւիտենական կեանքը անոնց՝ որ բարի գործքերու մէջ համբերութեամբ յարատեւելով , փառք ու պատիւ և անմահութիւն կը խնդրեն . բայց անոնց որ հակառակ են , և ճշմարտութեան անհնազանդ՝ ու անիրաւութեան հնազանդած , բարկութիւն և սրտմտութիւն՝ նեղութիւն և տառապանք պիտի ըլլայ ամէն մարդու վրայ՝ որ չար կը գործէ , առաջ Հրէային՝ ու եւրքը Յոյնին . իսկ փառք ու պատիւ և խաղաղութիւն ան ամենուն՝ որ բարի կը գործէ , առաջ Հրէային՝ ու եւրքը Յոյնին : Ինչու որ Աստուծոյ քովը աչառութիւն չկայ : Հռով . բ . 7—11 :

Եսոր վրայ մի՛ զարմանաք . ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն , ու դուրս պիտի գան . անոնք որ բարի գործեր են , կենաց յարութեան համար , և անոնք որ չար գործեր են , դատապարտութեան յարութեան համար : Յովհ . ե . 28—29 :

Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը , իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը : Մատ . իգ . 46 :

---

* Հրեշտակին Հաւատոյ Դատաստանը կը հրատարակէր , ինչպէս սովորաբար պարտականներուն ալ պիտի պիտի կը պարբերի . Տարբերութիւն գտնենք որ մեր յարգի ընթերցողները գիտնան թէ՝ մենք ընտրեցինք որ մինչ և իսկ Հաւատոյ Դատաստանը մը , իսկ ուրիշ գրքոյկ մը Խոստաստելոնէն պէս՝ ներընդարձակ հեղինակութիւն ունի , իսկ կրնայ ունենալ :

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Ըստուածաշունչը՝ որն որ նաև Սուրբ Գիրք կ'ըսուի, կը բաժնուի 'ի Հին և 'ի Նոր Կտակարան։

Հին Կտակարանին կանոնական գրեանքը հետեւեալներն են։

Գիրք Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց, Երկրորդ Օրինաց, Յեսուայ, Դատաւորաց, Հռութայ, ա, բ, գ և դ Թագաւորաց, ա և բ Մնացորդաց, Եզրասայ, Նեհեմիայ, Եսթերայ, Յոբայ, Սաղմոսաց, Առակաց, Յողովսղի, Երգ Երգոց։ Մարգարէութիւն Եսայեայ, Երեմիայ։ Ողբք Երեմիայ։ Եզեկիելի, Դանիելի, Ովսեայ, Յովելեայ, Ամոսայ, Աբդիու, Յովնանու, Միքիայ, Նաւումայ, Ամբակումայ, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ, և Մաղաքիայ։

Նոր Կտակարանին կանոնական գրեանքը հետեւեալներն են։

Աւետարան ըստ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, Յովհաննու, Գործք Առաքելոց, Թուղթ Պօղոսի առաքելոյն առ Հռովմայեցիս, առ Կորնթացիս ա և բ։ առ Գաղատացիս, առ Եփեսացիս, առ Փիլիպպեցիս, առ Կողոսա-

ցիս ։ առ Թեսաղոնիկեցիս ՝ա և ՝բ ։ առ Տիմոթէոս ՝ա և ՝բ ։ առ Տիտոս ։ առ Փիլիմոն ։ առ Եբրայեցիս ։ Թուղթ Յակոբու ։ Պետրոսի ՝ա և ՝բ ։ Յովհաննու ՝ա ։ ՝բ և ՝գ ։ Յուդայի ։ Յայտնութիւն Յովհաննու ։

ՎԵՐՋ։

4997 -5005

2013